



# ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ

## 2017/2018

ԵՐԵՎԱՆ 2017

# ԿԱՆՈՆ 01

# ԽԱՂԱԴԱՇՏԸ

## 1. Խաղադաշտի ծածկույթ

Խաղադաշտի խաղային ծածկույթը պետք է լինի ամբողջությամբ բնական, կամ, եթե մրցման կանոնակարգը թույլատրում է ամբողջությամբ արհեստական, բացառությամբ, այն դեպքերի, երբ մրցումների կանոնակարգը թույլատրում է արհեստական և բնական նյութերի ինտեգրված համադրություն (հիբրիդ համակարգ):

Արհեստական ծածկույթի գույնը պետք է լինի կանաչ:

Եթե ՖԻՖԱ-ին անդամակցող ազգային ֆուտբոլային ասոցիացիաների թիմերի միջև հանդիպումները կամ միջազգային ակունքային մրցաշարերը անցկացվում են արհեստական ծածկույթով խաղադաշտերում, ապա դրանք պետք է համապատասխանեն Ֆուտբոլային Ծածկույթների մասին ՖԻՖԱ-ի Որակի Ծրագրին կամ Միջազգային Խաղի Չափորոշիչներին, բացառությամբ, այն դեպքերի, երբ ԻՖԱԲ-ը տվել է հատուկ թույլտվություն:

## 2. Խաղադաշտի գծանշումներ

Խաղադաշտը պետք է լինի ուղղանկյուն և գծանշված չընդհատվող գծերով, որոնք չպետք է լինեն վտանգավոր: Բնական խաղադաշտերի գծանշումների համար կարող է օգտագործվել արհեստական խաղային մակերեսություն, եթե դա վտանգավոր չէ: Այդ գծերը սահմանազատում են խաղադաշտի տարածքները և հանդիսանում են տվյալ տարածքի մաս:

Խաղադաշտը պետք է գծանշվի միայն Կանոն 1-ում նշված գծերով:

Խաղադաշտը եզրագծող երկու երկար գծերը կոչվում են կողագծեր, իսկ երկու կարճերը՝ դարպասային գծեր:

Խաղադաշտը բաժանվում է 2 կիսադաշտի միջին գծով, որը միացնում է կողագծերի միջնակետերը:

Միջին գծի միջնակետում գտնվում է խաղադաշտի կենտրոնը, որի շուրջն էլ գծվում է 9.15մ (10 յարդ) շառավղով շրջանագիծ:

Կարելի է գծանշում կատարել խաղաղաշտի սահմաններից դուրս՝ անկյունային սեկտորից 9.15 մ (10 յարդ) հեռավորության վրա դարպասային և կողային գծերին ուղղահայաց:

Բոլոր գծերը պետք է լինեն միևնույն լայնության և չպետք է գերազանցեն 12 սմ (5 յուլյ): Դարպասային գծերը պետք է լինեն դարպասայունների և հեծանի լայնության:

Եթե օգտագործվում են արհեստական ծածկույթներ, ապա թույլատրվում են այլ գծեր, պայմանով, որ դրանք լինեն ուրիշ գույնի և զանազանելի ֆուտբոլի համար օգտագործվող գծերից:

Եթե խաղացողը ոտքով չթույլատրվող գծանշումներ է կատարում խաղաղաշտում, ապա նա պետք է զգուշացվի՝ ոչ սպորտային վարքագժի համար: Եթե մրցավարը նկատում է դա խաղի ընթացքում, ապա խաղացողը պետք է զգուշացվի մոտակա խաղաղադարին:

### 3. Չափսեր

Կողագիծը պետք ավելի երկար լինի դարպասային գծից:

Երկարություն (կողագիծ)

Լայնություն (դարպասային գիծ)

նվազագույնը 90 մ (100 յարդ)

նվազագույնը 45 մ (50 յարդ)

առավելագույնը 120 մ (130 յարդ)

առավելագույնը 90 մ (100 յարդ)

### 4. Չափսեր միջազգային խաղերի համար

Երկարություն (կողագիծ)

Լայնություն (դարպասային գիծ)


նվազագույնը 100 մ (100 յարդ)

նվազագույնը 64 մ (70 յարդ)

առավելագույնը 110 մ (120 յարդ)

առավելագույնը 75 մ (80 յարդ)

Մրցման կանոնակարգը կարող է սահմանել դարպասային և կողային գծերի երկարությունը վերը նշված չափերի սահմաններում:



## 5. Դարպասային հրապարակը

Դարպասայուների ներսից 5.5 մ (6 յարդ) հեռավորության վրա գծանշվում են դարպասային գծին ուղղահայաց երկու ուղիղներ: Այդ ուղիղները ձգվում են դեպի խաղաղաշտ 5.5 մ (6 յարդ) երկարությամբ և միանում դարպասային գծին զուգահեռ գծով: Այդ գծերով սահմանազատված տարածքը կոչվում է դարպասային հրապարակ:

## 6. Տուգանային հրապարակը


Դարպասայուների ներսից 16.5 մ (18 յարդ) հեռավորության վրա գծանշվում են դարպասային գծին ուղղահայաց երկու ուղիղներ: Այդ ուղիղները ձգվում են դեպի խաղաղաշտ 16.5 մ (18 յարդ) երկարությամբ և միանում են դարպասային գծին զուգահեռ գծով: Այդ գծերով սահմանազատված տարածքը կոչվում է տուգանային հրապարակ:

Յուրաքանչյուր տուգանային հրապարակում, դարպասային գծի միջնակետից 11 մ (12 յարդ) հեռավորությամբ, նշվում է 11 մետրանոց նշակետը:

Յուրաքանչյուր տուգանային հրապարակից դուրս, 11 մետրանոց նշակետից 9.15 մ (10 յարդ) շառավղով գծանշվում է շրջանագծի աղեղ:

## 7. Անկյունային հրապարակը

Անկյունային հրապարակը գծանշվում է խաղաղաշտի սահմաններում, յուրաքանչյուր անկյունային դրոշակից 1 մ (1 յարդ) շառավիղ ունեցող քառորդ շրջանագծով:



## **8. Դրոշակաձողեր**

Խաղաղաշտի յուրաքանչյուր անկյունում պետք է տեղադրված լինի հարթ գագաթով և նվազագույնը 1.5 մ (5 ֆուտ) բարձրությամբ դրոշակաձող՝ դրոշակով:

Դրոշակաձողեր կարող են տեղադրված լինել նաև միջին գծի յուրաքանչյուր եզրում՝ կողագծից դուրս նվազագույնը 1 մ (1 յարդ) հեռավորությամբ:

## **9. Տեխնիկական գոտի**

Տեխնիկական գոտին վերաբերում է այն խաղերին, որ անցկացվում են մարզաշտերում, որոնք ունեն թիմի պաշտոնյաների և փոխարինողների համար նախատեսված նստատեղերի գոտի, ինչպես նկարագրված է ստորև.

- տեխնիկական գոտին պետք է տարածվի նստատեղերի գոտու ամեն կողմից 1 մետր (1 յարդ) հեռավորությամբ և ձգվի առաջ դեպի կողագիծը՝ գտնվելով դրանից մինչև 1 մետր (1 յարդ) հեռավորության վրա
- այս գոտին սահմանազատելու համար պետք է օգտագործվեն գծանշումներ
- տեխնիկական գոտում գտնվելու իրավունք ունեցողների թույլատրվող քանակը, պետք է սահմանվի մրցման կանոնակարգով
- տեխնիկական գոտում գտնվողները պետք է.
  - որոշվեն և գրանցվեն մինչև խաղի սկիզբը, համաձայն մրցման կանոնակարգի
  - իրենց պատշաճ պահեն
  - մնան տեխնիկական գոտու սահմաններում, բացառությամբ հատուկ իրավիճակների, օրինակ, երբ մերսողը և բժիշկը, մրցավարի թույլտվությամբ, մտնում են խաղաղաշտ՝ վնասվածք ստացած խաղացողին հետազոտելու համար
- տեխնիկական գոտուց միաժամանակ միայն մեկ անձ կարող է տակտիկական ցուցումներ տալ

## **10. Դարպասներ**

Դարպաս պետք է տեղադրված լինի յուրաքանչյուր դարպասային գծի կենտրոնում:

Դարպասը բաղկացած է անկյունային դրոշակաձողերից հավասար հեռավորության վրա գտնվող երկու ուղղահայաց դարպասասյուներից և վերևուն դրանք միացնող հեծանից: Դարպասասյուները և հեծանը պետք է պատրաստված լինեն թույլատրված նյութից: Դրանք ձևով պետք է լինեն քառակուսի, ուղղանկյուն, կլոր կամ էլիպսաձև և չպետք է վտանգավոր լինեն:

Դարպասասյուների ներսի մասերի միջև ընկած հեռավորությունը 7.32 մ (8 յարդ) է, իսկ հեծանի ներքին մասի բարձրությունը գետնից՝ 2.44 մ (8 ֆուտ):

Դարպասասյուները դարպասային գծի վրա պետք է տեղադրված լինեն ըստ նշված գրաֆիկների:


Դարպասասյուները և հեծանը պետք է լինեն սպիտակ և ունենան միևնույն լայնությունը և խորությունը, որը չպետք է գերազանցի 12 սմ-ը (5 դյույմ):

Եթե հեծանը տեղաշարժվել կամ կոտրվել է, ապա խաղը պետք է կանգնեցվի, մինչ այն կվերանորոգվի կամ կտեղադրվի իր դիրքում: Եթե այն հնարավոր չէ վերանորոգել, ապա խաղը պետք է դադարեցվի: Հեծանը չի կարելի փոխարինել ճոպանով կամ այլ ճկուն կամ վտանգավոր նյութով: Խաղը պետք է վերսկսվի «Վիճաբանական գնդակ»-ի նետումով:

Ցանցեր կարող են ամրացված լինել դարպասներին և գետնին (դարպասի հետևի մասում): Դրանք պետք է բավականաչափ հուսալի լինեն և չխանգարեն դարպասապահին:

## **Անվտանգություն**

Դարպասները (ներառյալ շարժական դարպասները) պետք է ապահով ամրացված լինեն գետնին:



## **11. Դարպասային գծի տեխնոլոգիա (ՂԳՏ)**

ՂԳՏ (GLT) համակարգ կարող է օգտագործվել դարպասի գրավումը ստուգելու և մրցավարի որոշմանն աջակցելու համար:

Եթե օգտագործվում է ՂԳՏ, ապա բույլատրվում է դարպասների ձևափոխություն՝ համաձայն ՂԳՏ-ի վերաբերյալ ՖԻՖԱ-ի Որակի Ծրագրի հատուկ սահմանումների և Խաղի Կանոնների: ՂԳՏ-ի օգտագործումը պետք է ամրագրված լինի տվյալ մրցաշարի կանոնակարգում:

### **ՂԳՏ-ի սկզբունքները**

ՂԳՏ-ն կիրառվում է միայն դարպասային գծին և միայն դարպասի գրավումը որոշելու համար:

ՂԳՏ համակարգը, դարպասի գրավման ազդանշանը պետք է անհապաղ և ավտոմատ հաստատի մեկ վայրկյանի ընթացքում ու հաղորդի միայն խաղի պաշտոնյաներին (մրցավարի ժամացուցով՝ վիրացիայի և տեսանելի ազդանշանի միջոցով):

### **ՂԳՏ-ի պահանջները և առանձնահատկությունները**

Եթե մրցաշարի խաղերում ՂԳՏ է օգտագործվում, ապա մրցաշարի կազմակերպիչները պետք է համոզված լինեն, որ համակարգը երաշխավորած է և բավարարում է հետևյալ չափորոշիչներից որևէ մեկի պահանջներին.

- FIFA Quality PRO
- FIFA Quality
- IMS – INTERNATIONAL MATCH STANDARDS

Անկախ փորձարարական ինստիտուտը պետք է ստուգի տարբեր տեխնոլոգիական մատակարարների համակարգերի ճշտությունը և աշխատունակությունը՝ համաձայն Փորձարկման Զեռնարկի: Եթե տեխնոլոգիան չի գործում համաձայն Փորձարկման Զեռնարկի, ապա մրցավարը չպետք է օգտագործի ՂԳՏ համակարգը և այդ մասին պետք է գեկուցի համապատասխան նարմիններին:

Եթե ՂԳՏ է օգտագործվում, ապա մրցավարը խաղից առաջ պետք է ստուգի տեխնոլոգիաների աշխատունակությունն այնպես, ինչպես նշված է ՖԻՖԱ-ի Որակի Ծրագրի ՂԳՏ համար Փորձարկման Զեռնարկում:

## **12. Կոմերցիոն գովազդ**

Կոմերցիոն գովազդ որևէ տեսքով՝ իրական (ռեալ) կամ վիրտուալ չի թույլատրվում խաղաղաշտում, դարպասացանցերով սահմանափակված տարածքում, տեխնիկական գոտում կամ խաղաղաշտի եզրագծերին 1մ-ից (1 յարդ) մոտ՝ գետնին, այն պահից, եթե թիմերը մտնում են խաղաղաշտ մինչև առաջին խաղակեսի ավարտին այնտեղից դուրս գալը, և եթե թիմերը վերադառնում են միջխաղային ընդմիջումից մինչև խաղի ավարտը: Նմանապես գովազդներ և կողմնակի սարքավորումներ (տեսախցիկներ, խոսափողներ և այլն) չեն թույլատրվում տեղադրել դարպասներին, դարպասացանցերին, անկյունային դրոշակաձողերին ու դրանց դրոշներին:

Ի լրումն, ուղղահայաց գովազդները պետք է լինեն նվազագույնը.

- Խաղաղաշտի կողագծերից 1 մ (1 յարդ) հեռավորության վրա
- Դարպասային գծից միևնույն հեռավորության վրա ինչպիսին է դարպասային ցանցի խորությունը
- Դարպասային ցանցից 1 մ (1 յարդ) հեռավորության վրա

## **13. Տարբերանշաններ (լոգոներ) ու խորհրդանիշեր**

Խաղի ընթացքում արգելվում է վերարտադրել՝ ռեալ կամ վիրտուալ ՖԻՖԱ-ի, կոնֆեդերացիաների, ազգային ֆուտբոլային ասոցիացիաների, մրցումների, ակումբների կամ այլ մարմինների ներկայացուցչական տարբերանշանները (լոգոները) կամ խորհրդանիշերը խաղաղաշտի վրա, դարպասացանցերին և դրանցով սահմանափակված տարածքներում, դարպասներին և անկյունային դրոշակաձողերին: Դրանք թույլատրվում են դրոշակաձողերին ամրացված դրոշների վրա:

ԿԱՆՈՆ 02

# ԳՆԴԱԿԸ

## 1. Որակներ և չափսեր

Բոլոր գնդակները պետք է լինեն.

- գնդածն
- պատրաստված համապատասխան նյութից
- 68 սմ-ից (27 դյույմ) մինչև 70 սմ (28 դյույմ) շրջագծի երկարությամբ
- խաղի սկզբում 410 գրամ-ից (14 ունցիա) մինչև 450 գրամ (16 ունցիա) կշիռով
- 0.6-1.1 (600-1100 գ/քառ.սմ) մթն. ճնշումով ծովի մակերևույթին (8.5-15.6 ֆունտ/քառ. դյույմ)

ՖԻՖԱ-ի կամ կոնֆերացիաների հովանու ներքո անցկացվող պաշտոնական մրցաշարերի խաղերի ժամանակ օգտագործվող բոլոր գնդակները պետք է կրեն հետևյալ տարբերանշաններից (լոգո) որևէ մեկը.



• FIFA Quality PRO



• FIFA Quality



• IMS - INTERNATIONAL  
MATCH STANDARD

Նախկին “FIFA APPROVED”, “FIFA INSPECTED” կամ “INTERNATIONAL MATCHBALL STANDARD” որակի տարբերանշաններ ունեցող գնդակները կարող են օգտագործվել վերը նշված առաջնություններում մինչև 2017 թ.-ի հուլիսի 31-ը:

Յուրաքանչյուր տարբերանշան վկայում է, որ գնդակը պաշտոնապես ստուգվել և համապատասխանում է տվյալ տարբերանշանի հատուկ տեխնիկական պահանջներին ի լրումն Կանոն 2-ում նկարագրված նվազագույն պահանջներին: Այդ գնդակները պետք է հաստատված լինեն IFAB-ի կողմից: Ստուգումն իրականացնող կազմակերպությունները հաստատվում են ՖԻՖԱ-ի կողմից:

Եթե օգտագործվում է Դարպասային Գծի Տեխնոլոգիա (GLT), ապա այդ տեխնոլոգիայով հագեցված գնդակները պետք է կրեն վերը նշված որակի նշաններից որևէ մեկը:

Ազգային ֆուտբոլային ասոցիացիաները կարող են պահանջել, որ իրենց առաջնություններում օգտագործվեն այս տարբերանշաններից որևէ մեկը կրող գնդակներ:

ՖԻՖԱ-ի, կոնֆերացիաների և ազգային ֆուտբոլային ասոցիացիաների հովանու ներքո կազմակերպված հանդիպումներում չի թույլատրվում գնդակների վրա գետեղել որևէ կոմերցիոն գովազդ, բացառությամբ տվյալ մրցաշարի տարբերանշանի, կազմակերպչի և գնդակն արտադրողի հաստատված առևտրային ապրանքանիշի: Մրցնան կանոնակարգը կարող է սահմանել այդ տարբերանշանների չափերն ու քանակը:

## 2. Ոչ պիտանի գնդակի փոխարինումը

Եթե գնդակը դառնում է ոչ պիտանի, ապա՝ պետք է.

- Խաղը կանգնեցվի և
- Վերսկսվի փոխարինված գնդակի վիճաբանական նետումով այնտեղից, որտեղ հիմնական գնդակը դարձել է ոչ պիտանի

Եթե գնդակը դարձել է ոչ պիտանի, սկզբնահարվածի, դարպասից հարվածի, անկյունային հարվածի, տուգանային/ազատ հարվածի, 11 մ-ոց հարվածի կամ կողագծից նետման ժամանակ, ապա վերսկումը պետք է կրկնվի:

Եթե գնդակը դարձել է ոչ պիտանի 11 մ-ոց հարվածի կամ հարվածաշարի ընթացքում՝ շարժվելով առաջ, չդիպչելով մեկ այլ խաղացողի, դարպասայանը կամ հեծանին, ապա 11 մ-ոց հարվածը պետք է կրկնվի:

Խաղի ընթացքում գնդակը չի կարելի փոխարինել, առանց մրցավարի թույլատվության:

## 3. Լրացուցիչ գնդակներ

Խաղադաշտի շուրջը կարող են տեղադրված լինել լրացուցիչ գնդակներ, որոնք պետք է համապատասխանեն Կանոն 2-ի պահանջներին և դրանց օգտագործումը պետք է լինի մրցավարի հսկողության տակ:

# ԿԱՆՈՆ 03

# ԽԱՂԱԳՈՂԵՐԸ

## 1. Խաղացողների քանակ

Հանդիպումն անցկացվում է երկու թիմերի մասնակցությամբ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է առավելագույնը տասնմեկ խաղացողներից, որոնցից մեկը պետք է լինի դարպասապահ: Հանդիպումը չի կարող սկսվել կամ շարունակվել, եթե թիմերից որևէ մեկի կազմում կա յոթից պակաս ֆուտբոլիստ:

Եթե թիմն ունի 7-ից պակաս խաղացող, որովհետև մեկ կամ մի քանի խաղացողներ միտումնավոր թողել են խաղադաշտը, ապա մրցավարը պարտավոր չէ կանգնեցնել խաղը և կարող է կիրառել առավելություն տալու սկզբունքը: Բայց խաղը չպետք է վերսկսվի գնդակը խաղից դուրս գալուց հետո, եթե թիմն իր կազմում չունի նվազագույնը 7 խաղացող:

Եթե մրցումների կանոնակարգով հաստատված է, որ խաղի արձանագրությունում բոլոր խաղացողները և փոխարինողները պետք է արձանագրված լինեն մինչև խաղակիզբը և թիմը խաղը սկսում է 11-ից քիչ խաղացողով, ապա միայն այն խաղացողները և փոխարինողները, ովքեր նշված են արձանագրությունում, ժամանելուն պես կարող են մասնակցել խաղին:

## 2. Փոխարինումների քանակ

### Պաշտոնական մրցաշարեր

ՖԻՖԱ-ն, կոնֆերացիան կամ ազգային ֆուտբոլային ասոցիացիան պետք է սահմանի իր հովանու ներքո կազմակերպությունը պաշտոնական մրցաշարերի գանկացած հանդիպման ժամանակ թույլատրվող փոխարինումների քանակը՝ առավելագույնը հինգ, բազառությանը տղամարդկանց և կանանց բարձրագույն խմբի առաջնությունների, որում ներգրավված են ակումբների 1-ին թիմերը կամ ազգային հավաքականները: Այդ առաջնություններում թույլատրվում է առավելագույնը երեք փոխարինում:

Մրցման կանոնակարգը պետք է սահմանի արձանագրվող փոխարինումների քանակը՝ սկսած երեքից, մինչև առավելագույնը տասներկու:

## **Այլ հանդիպումներ**

Ազգային հավաքականների հանդիպումների ընթացքում կարելի է կատարել առավելագույնը վեց փոխարինում:

Բոլոր այլ հանդիպումներում կարելի է կատարել ավելի շատ փոխարինումներ, պայմանով, որ.

- թիմերը նախնական համաձայնության են եկել առավելագույն քանակի հարցում
- մրցավարը տեղեկացված է այդ մասին հանդիպումից առաջ

Եթե խաղից առաջ մրցավարը չի տեղեկացվել կամ թիմերը չեն եկել համաձայնության, ապա թույլատրվում է առավելագույնը վեց փոխարինում:

## **Հետադարձ փոխարինումներ**

Հետադարձ փոխարինումների օգտագործումը թույլատրվում է միայն պատահների, վետերանների, հաշմանդամների և մանկական ֆուտբոլում և միայն ազգային ֆուտբոլային ասոցիացիայի, կոնֆեդերացիայի կամ ՖԻՖԱ-ի համաձայնությամբ:

### **3. Փոխարինման ընթացակարգ**

Հանդիպման խաղասկզբից առաջ փոխարինողների ազգանումները պետք է ներկայացվեն մրցավարին: Այն փոխարինողները, որոնք չեն արձանագրվել, չեն կարող մասնակցել հանդիպմանը:

Խաղացողին փոխարինողով փոխարինելու ժամանակ պետք է պահպանել հետևյալ պայմանները.

- մրցավարը պետք է տեղեկացվի՝ մինչ կկատարվի ցանկացած փոխարինում
- փոխարինվողը պետք է մրցավարից ստանա խաղադաշտը թողնելու թույլտվություն, բացառությամբ, եթե նա արդեն գտնվում է խաղադաշտից դուրս
- փոխարինված խաղացողը պարտավոր չէ թողնել խաղադաշտը միջին գծից և այլևս չի կարող մասնակցել խաղին, բացառությամբ, եթե թույլատրվում է կատարել հետադարձ փոխարինումներ
- եթե խաղացողը, ով պետք է փոխարինվի, հրաժարվում է թողնել խաղադաշտը, ապա խաղը պետք է շարունակվի

Փոխարինողը կարող է մտնել խաղադաշտ միայն.

- խաղադադարի ժամանակ
- միջնագծից
- երբ փոխարինվողը թողել է խաղադաշտը
- մրցավարի կողմից համապատասխան ազդանշան ստանալուց հետո

Փոխարինումն ավարտվում է, եթե փոխարինողը մտնում է խաղաղաշտ: Այդ պահից սկսած՝ խաղաղողը, որին փոխարինել են, դառնում է փոխարինված խաղաղող, իսկ փոխարինողը դառնում է խաղաղող և կարող է կատարել խաղի զանկազած վերսկսում:

Բոլոր փոխարինողները և փոխարինված խաղացողները մրցավարի իրավասության ներքո են, անկախ նրանց խաղալու կամ չխաղալու հանգանաքից:

#### 4. Դարպասապահի փոխարինում

Ցանկացած խաղաղող կարող է իր տեղը փոխել դարպասապահի հետ, եթե.

- մրցավարը նախապես տեղեկացվել է այդ փոխարինման մասին
- փոխարինումը կատարվել է խաղաղադարի ժամանակ

#### 5. Խախտումներ և պատժամիջոցներ

Եթե խաղակարին արձանագրված փոխարինողը սկսում է խաղը արձանագրված խաղացողի փոխարեն և մրցավարը տեղեկացված չէ այդ փոփոխության մասին ապա.

- մրցավարը թույլատրում է արձանագրված փոխարինողին շարունակել խաղը
- արձանագրված փոխարինողի նկատամամբ կարգապահական պատժամիջոց չի կիրառվում
- արձանագրված խաղացողը կարող է դառնալ արձանագրված փոխարինող
- փոփոխությունների քանակը չի նվազեցվում
- մրցավարը միջադեպի մասին պետք է գեկուցագիր ներկայացնի համապատասխան մարմիններին

Եթե փոխարինում է կատարվել խաղամիջյան ընդմիջմանը կամ լրացուցիչ ժամանակից առաջ, ապա փոխարինման ընթացակարգը պետք է կատարվի մինչև խաղի վերսկսվելը: Եթե մրցավարը տեղեկացված չէ, ապա արձանագրված փոխարինողը կարող է շարունակել խաղը, կարգապահական պատժամիջոց չպետք է կիրառվի և այդ մասին պետք է գեկուցագիր ներկայացվի համապատասխան մարմիններին:

Եթե խաղացողը փոխում է իր տեղը դարպասապահի հետ, առանց մրցավարի թույլատվության, ապա.

- մրցավարը պետք է թույլատրի շարունակել խաղը
- մրցավարը երկու խաղացողներին էլ պետք է գգուշացնի՝ մոտակա խաղաղադարի ժամանակ, ըայց չպետք է գգուշացնի խաղացողներին, եթե դա տեղի է ունեցել խաղամիջյան ոնդմիջման ժամանակ (ներառյալ լրացուցիչ ժամանակը), կամ խաղավարութիւ հետո՝ մինչ հետխաղյա հարվածաշարը և/կամ 11 մետրանոց հարվածաշարի ժամանակ:

Ցանկացած այլ խախտման դեպքում.

- Խաղացողները պետք է զգուշացվեն
- Խաղը պետք է վերսկսվի ազատ հարվածով այնտեղից, որտեղ գտնվել է գնդակը խաղը կանգնեցնելիս

## 6. Հեռացված խաղացողներ և փոխարինողներ

Խաղացողը, ով հեռացվել է.

- մինչ թիմի կազմի ներկայացնելը, հետագայում ընդհանրապես չի կարող այնտեղ արձանագրվել
- մինչ սկզբնահարվածը՝ նշված լինելով թիմի կազմում, կարող է փոխարինվել արձանագրված փոխարինողով (ում փոխարեն այլ անձ այլևս չի կարող արձանագրվել): Թիմի բույլատրված փոխարինումների քանակը չի նվազեցվում:
- սկզբնահարվածից հետո, չի կարող փոխարինվել

Արձանագրված փոխարինողը, ով հեռացվում է մինչև սկզբնահարվածը կամ դրանից հետո, չի կարող փոխարինվել:

## 7. Լրացուցիչ անձիք խաղադաշտում

Մարզիչը և այլ պաշտոնյաները, որոնք նշված են արձանագրությունում (բացառությամբ խաղացողների և փոխարինողների), հանդիսանում են թիմի պաշտոնյաներ: Որևէ մեկը, ով արձանագրված չէ արձանագրությունում որպես թիմի խաղացող, փոխարինող կամ պաշտոնյա, համարվում է կողմնակի անձ:

Եթե թիմի պաշտոնյա, փոխարինող, փոխարինված կամ հեռացված խաղացող կամ կողմնակի անձ մտնի խաղադաշտ, ապա մրցավարը պետք է.

- կանգնեցնի խաղը միայն, եթե միջամտություն լինի
- դուրս հանի նրան խաղադաշտից՝ մոտակա խաղադաշտին
- կիրարի համապատասխան կարգապահական պատժամիջոց

Եթե խաղը կանգնեցվել է, քանի որ միջամտություն է կատարվել.

- թիմի պաշտոնյայի, փոխարինողի, փոխարինված կամ հեռացված խաղացողի կողմից, ապա խաղը պետք է վերսկսվի տուգանային կամ 11 մետրանոց հարվածով
- կողմնակի անձի կողմից, ապա խաղը պետք է վերսկսվի «վիճաբանական գնդակ»-ի նետումով

Եթե միջամտությունը չի խանգարում պաշտպանվող խաղացողին խաղալու գնդակ, որն ընթանում էր դեպի դարպասը և գոլ է մտնում, ապա գոլն արձանագրվում է (նույնիսկ եթե գնդակի հետ հպում է եղել), բացառությամբ, եթե գնդակը մտնում է մրցակցի դարպասը:

## 8. Խաղադաշտից դուրս գտնվող խաղացող

Եթե խաղացողը, ով խաղադաշտ վերադառնալու համար պետք է ստանա մրցավարի թույլատվությունը, վերադառնում է՝ առանց մրցավարի թույլատվության, ապա մրցավարը պետք է.

- կանգնեցնի խաղը (ոչ անմիջապես, եթե խաղացողը չի միջամտում խաղին կամ խաղի պաշտոնյային կամ, եթե հնարավոր է կիրառել առավելություն տալու սկզբունքը)
- զգուշացնի խաղացողին՝ առանց թույլատվության խաղադաշտ մտնելու համար

Եթե մրցավարը կանգնեցրել է խաղը, ապա այն պետք է վերսկսվի.

- տուգանային հարվածով այնտեղից, որտեղ կատարվել է միջամտությունը
- ազատ հարվածով այնտեղից, որտեղ գնդակն էր խաղը կանգնեցնելիս, եթե միջամտություն չի եղել

Եթե խաղացողը խաղային շարժման արդյունքում հատում է խաղադաշտի սահմանագծերից որևէ մեկը, ապա նա խախտում չի կատարում:

## 9. Դարպասի գրավում, երբ լրացուցիչ անձ կա խաղադաշտում

Եթե դարպասի գրավումից հետո՝ նախքան խաղը վերսկսելը, մրցավարը նկատում է, որ դարպասի գրավման ժամանակ լրացուցիչ անձ է եղել խաղադաշտում, ապա.

- մրցավարը պետք է չարձանագրի գոլը, եթե լրացուցիչ անձը եղել է.
  - դարպասը գրավող թիմի խաղացող, փոխարինող, փոխարինված խաղացող, հեռացված խաղացող կամ թիմի պաշտոնյա: Խաղը պետք է վերսկսվի տուգանային հարվածով այնտեղից, որտեղ գտնվել է լրացուցիչ անձը
  - կողմնակի անձ, ով միջամտել է խաղին, բացառությամբ, եթե գոլը խփվել է ըստ «Լրացուցիչ անձիք խաղադաշտում» ենթավերնագրի նկարագրության: Խաղը պետք է վերսկսվի «վիճաբանական գնդակ»-ի նետումով
- մրցավարը պետք է արձանագրի գոլը, եթե լրացուցիչ անձը եղել է.
  - այն թիմի խաղացող, փոխարինող, փոխարինված խաղացող, հեռացված խաղացող կամ թիմի պաշտոնյա ում դարպասին գոլ է խփվել
  - կողմնակի անձ, ով չի միջամտել է խաղին

Բոլոր դեպքերում մրցավարը պետք է դուրս հանի լրացուցիչ անձին խաղաղաշտից:

Եթե գոլ խփելուց հետո խաղը վերսկսվել է և միայն դրանից հետո է մրցավարը հասկացել, որ գոլ խփելիս խաղաղաշտում լրացուցիչ անձ է եղել, ապա գոլը չի կարող չեղյալ հայտարարվել: Եթե լրացուցիչ անձը դեռ խաղաղաշտում է, ապա մրցավարը պետք է.

- կանգնեցնի խաղը
- դուրս հանի լրացուցիչ անձին խաղաղաշտից
- վերսկսի խաղը «Վիճաբանական գնդակի» նետումով կամ համապատասխանաբար՝ տուգանային/ազատ հարվածով

Մրցավարը պետք է ներկայացնի գեկուցագիր համապատասխան մարմիններին:

## **10. Թիմի ավագ**

Թիմի ավագը չունի որևէ հատուկ կարգավիճակ կամ առավելություններ, սակայն ունի որոշակի պատասխանատվություն իր թիմի վարքագծի համար:

ԿԱՆՈՆ 04

# ԽԱՂԱՑՈՂՆԵՐԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԸ

## 1. Անվտանգություն

Խաղացողը չպետք է օգտագործի հանդերձանք կամ կրի որևէ իր, որը վտանգավոր է:

Ցանկացած տեսակի զարդեր (վզնոցներ, մատանիներ, թևնոցներ, ականջողեր, կաշվե և ռետինե թևնոցներ և այլն) արգելվում են և պետք է հանվեն: Չի թույլատրվում զարդեղենը ծածկել կաչուն ժապավենով:

Խաղացողները պետք է ստուգվեն մինչ խաղի սկիզբը, իսկ փոխարինողները՝ մինչ խաղադաշտ մտնելը: Եթե խաղացողը կրում կամ օգտագործում է չթույլատրվող/Վտանգավոր հանդերձանք կամ զարդեղեն, ապա մոցավարը պետք է հրահանգի խաղացողին.

- հանել այդ իրը
- թողնել խաղադաշտը հաջորդ խաղադաշտին, եթե խաղացողն ի վիճակի չէ կամ չի ցանկանում դա կատարել

Այն խաղացողը, ով հրաժարվում է դա կատարել կամ շարունակում է կրել այդ իրը՝ պետք է զգուշացվի:

## 2. Պարտադիր հանդերձանք

Խաղացողի պարտադիր հանդերձանքը բաղկացած է հետևյալ առանձին պարագաներից:

- թերով խաղաշապիկ
- վարտիք
- գուլպաներ - կաչուն ժապավեն կամ ցանկացած նյութ օգտագործելիս կամ կրելիս այն պետք է լինի գուլպայի այն մասի գույնի, որտեղ այն կիրառվում է կամ, որն այն ծածկում է
- սրճակալներ – դրանք պետք է պատրաստված լինեն համապատասխան նյութից, որպեսզի ապահովեն պաշտպանվածության բավարար աստիճան և ծածկված լինեն գուլպաներով
- խաղակոչիկ

Դարպասապահը կարող է կրել սպորտային տարատներ:

Խաղացողը, ով պատահաբար կորցնում է խաղակոշիկը կամ սրնքակալը պետք է այն վերականգնի հնարավորինս շուտ՝ ոչ ուշ քան մոտակա խաղադարձը: Եթե մինչ այդ խաղացողը խաղում է գնդակ և/կամ գոլ է խփում, ապա գոլն արձանագրվում է:

### 3. Գույներ

- Երկու թիմերը պետք է կրեն խաղային հանդերձանքի այնպիսի գույներ, որոնք տարբերվում են իրարից և խաղի պաշտոյաների հանդերձանքի գույներից
- Յուրաքանչյուր դարպասապահ պետք է կրի խաղային հանդերձանքի այնպիսի գույներ, որոնք տարբերվում են մյուս խաղացողների և խաղի պաշտոյաների հանդերձանքների գույներից
- Եթե երկու դարպասապահների խաղաշապիկները նույն գույնի են և նրանցից ոչ մեկը չունի այլ խաղաշապիկ, ապա մրցավարը պետք է թույլատրի սկսել խաղը

Ներքնաշապիկները պետք է լինեն խաղաշապիկի թևերի հիմնական գույնի:

Ներքնավարտիքները պետք է լինեն վարտիքի հիմնական գույնի կամ վարտիքի ամենաներքեալ մասի գույնի: Նույն թիմի խաղացողները պետք է կրեն միևնույն գույնի ներքնավարտիքներ:

### 4. Այլ հանդերձանք

Ոչ վտանգավոր պաշտպանիչ հանդերձանք կրելը, օրինակ գլխարկները, դիմակները, արմունկի կամ ծնկի պաշտպանիչները, պատրաստված փափուկ, թեթև, ճկուն նյութերից, թույլատրվում են ինչպես՝ դարպասապահների գլխարկները և սպորտային ակնոցները:

### Գլխաշորեր

Եթե օգտագործվում են գլխաշորեր (բազարությամբ դարպասապահների գլխարկներով), ապա դրանք պետք է.

- Լինեն սև կամ խաղաշապիկի հիմնական գույնի (պայմանով, որ նույն թիմի խաղացողները կրեն միևնույն գույնը)
- համապատասխանեն խաղացողի պրոֆեսիոնալ հանդերձանքի տեսքին
- ամրացված չլինեն խաղաշապիկներին
- չլինեն վտանգավոր այն կրողի կամ մեկ այլ խաղացողի համար (օր. բացվող/փակվող մեխանիզմ պարանոցի շուրջ)
- չունենան մակերեսից դուրս որևէ մաս (ցցված մասեր)

## **Էլեկտրոնային հաղորդակցություն**

Խաղազողներին (ներառյալ փոխարինողներին/փոխարինված խաղազողներին) չի թույլատրվում կրել կամ օգտագործել զանկազած տիպի էլեկտրոնային կամ հաղորդակցության համակարգ (բազառությամբ, եթե թույլատրվում է EPTS): Թիմի պաշտոնյաներին չի թույլատրվում օգտագործել զանկազած տիպի էլեկտրոնային հաղորդակցության համակարգ, բազառությամբ, եթե դա անմիջականորեն կապված է խաղազողների առողջությանը և անվտանգությանը:

## **Էֆեկտիվության վերահսկման էլեկտրոնային համակարգեր (EPTS)**

Եթե ՖԻՖԱ-ի, կոնֆերազիաի կամ ազգային ֆուտբոլային ասոցիացիաի հովանու ներք կազմակերպող պաշտոնական մրցաշարերի խառնության ժամանակ, օգտագործվում է կրելի տեխնոլոգիա (Wearable Technology WT) որպես էֆեկտիվության վերահսկման էլեկտրոնային համակարգերի (EPTS) մաս, ապա խաղազողների հանդերձանքին անրազված տեխնոլոգիան պետք է ունենա հետևյալ տարրերանշանը:



Այս տարրերանշան վկայում է, որ այն պաշտոնապես ստուգմել և համապատասխանում է ՖԻՖԱ-ի կողմից սահմանված Միջազգային խաղի Ստանդարտի (International Match Standard) անվտանգության նվազագույն պահանջներին և հաստատված են IFAB-ի կողմից: Ստուգումն իրականացնող կազմակերպությունները հաստատվում են ՖԻՖԱ-ի կողմից: Անցումային ժամանակաշրջանու տևողությունը է մինչև 31 մայիսի 2018 թ.:

Եթե օգտագործվում են էֆեկտիվության վերահսկման էլեկտրոնային համակարգեր (EPTS) (ազգային ֆուտբոլային ասոցիացիայի/մրցումների կազմակերպիչի համաձայնությամբ), ապա.

- դրանք չպետք է վտանգավոր լինեն
- խաղի ժամանակ չի թույլատրվում տեխնիկական գոտում ստանալ կամ օգտագործել սարքից/համակարգից փոխանցված տեղեկատվությունը և տվյալները

## **5. Կարգախոսեր, գրառումներ, պատկերներ և գովազդ**

Հանդերձանքը չպետք է ունենա որևէ քաղաքական, կրոնական կամ անձնական կարգախոսեր, գրառումներ կամ պատկերներ: Խաղացողները չպետք է ցուցադրեն ներքնաշապիկներ, որոնք կրում են քաղաքական, կրոնական կամ անձնական կարգախոսեր, գրառումներ պատկերներ կամ արտադրողի տարրերանշանից բացի այլ գովազդ: Ցանկացած խախտման համար խաղացողը և/կամ թիմը կպատժվի մրցաշարի կազմակերպչի, ազգային ֆուտբոլային ասոցիացիայի կամ ՖԻՖԱ-ի կողմից:

## **6. Խախտումներ և պատժամիջոցներ**

Ցանկացած խախտման համար անհրաժեշտ չէ խաղը կանգնեցնել և խաղացողը.

- պետք է հրահանգ ստանա մրցավարից՝ թողնելու խաղադաշտը, հանդերձանքը կարգի բերելու համար
- պետք է թողնի խաղադաշտը, եթե խաղը կանգնեցված է, բացառությամբ, եթե մինչ այդ հանդերձանքը կարգի չի բերվել

Խաղացողը, ով թողնում է խաղադաշտը հանդերձանքը կարգի բերելու կամ փոխելու համար, պետք է.

- մինչ վերադառնալու թույլատվություն ստանալը ստուգվի (հանդերձանքը) խաղի պաշտոնյայի կողմից
- վերադառնա խաղադաշտ միայն մրցավարի թույլատվությամբ (որը կարող է տրվել նաև խաղի ընթացքում)

Խաղացողը, ով մտնում է խաղադաշտ առանց թույլտվության, պետք է զգուշացվի և, եթե խաղը կանգնեցվել է զգուշացում տալու համար, ապա այն պետք է վերսկսվի ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվել է գնդակը խաղը կանգնեցնելիս:

# ԿԱՆՈՆ 05

# ՄՐՑԱՎԱՐԸ

## 1. Մրցավարի լիազորությունները

Յուրաքանչյուր խաղ հսկվում է մրցավարի կողմից, ով այդ հանդիպման ժամանակ ունի լիակատար լիազորություններ կիրառելու «խաղի կանոններ»-ը:

## 2. Մրցավարի որոշումներ

Մրցավարը օգտագործելով իր լավագույն որակները, պետք է կայացնի որոշումներ համաձայն խաղի կանոնների և «խաղի օգու»: Այդ որոշումներ պետք է հիմնված լինեն մրցավարի կարծիքի վրա, որն իրավասու է խաղի կանոնների սահմաններում՝ գործել իր հայեցողությամբ:

Մրցավարի որոշումները, որոնք վերաբերում են խաղին առնչվող փաստերին, ներառյալ՝ գոլ խփել է, թե՞ ոչ և հանդիպման արդյունքին, վերջնական են: Մրցավարի, ինչպես նաև մյուս խաղի պաշտոնյանների որոշումները միշտ պետք է հարգվեն:

Եթե մրցավարը գիտակցում է իր սխալը՝ ինքնուրույն կամ խաղի այլ պաշտոնյայի խորհրդից հետո, ապա նա չի կարող փոխել իր որոշումը, եթե խաղն արդեն վերսկսվել է կամ ինքն ազդարարել է առաջին կամ երկրորդ խաղակեսի ավարտը (ներառյալ լրացուցիչ ժամանակը, երբ այն խաղացվում է) և թողել է խաղադաշտը կամ անավարտ է թողել խաղը:

Եթե մրցավարը ժամանակավորապես ի վիճակի չէ հսկել խաղը, ապա այն մինչև մոտակա խաղադադարը կարող է շարունակվել խաղի այլ պաշտոնյանների հսկողությամբ:

## 3. Իրավունքներ և պարտականություններ

Մրցավարը պետք է.

- կիրարի «խաղի կանոններ»-ը
- հսկի խաղը, համագործակցելով խաղի այլ պաշտոնյանների հետ
- գործի որպես ժամանակաշափորդ, կատարի խաղի գրառումներ և ներկայացնի համապատասխան մարմիններին խաղի արձանագրությունը, որը պարունակում է տեղեկություն կիրառված ցանկացած կարգապահական որոշումների մասին, ինչպես նաև ցանկացած այլ միջադեպերի մասին, որոնք տեղի են ունեցել հանդիպումից առաջ, ընթացքում կամ հետո
- վերահսկի և/կամ ազդարարի խաղի վերսկումը

## Առավելություն

- առավելություն տա, թույլատրելով շարունակել խաղը, եթե թիմը, որի հանդեպ խախտում է կատարվել, կշահի նման առավելությունից, և պատժի սկզբնական խախտումը, եթե սպասված առավելություն չի հաջորդում այդ պահին կամ մի քանի վայրկյանի ընթացքում

## Կարգապահական պատժամիջոց

- Եթե միաժամանակ կատարվում են մեկից ավելի խախտումներ, ապա պետք է պատժի առավել լուրջ խախտումը՝ հաշվի առնելով կիրառվելիք պատժամիջոցը, խաղի վերսկսումը, ֆիզիկական ուժի կիրառման չափը և տակտիկական նկատառումները
- Կիրառի կարգապահական պատժամիջոցներ գգուշացնան կամ հեռացնան արժանի խախտումներ կատարած խաղացողների նկատմանը
- Մրցավարն իրավասու է կարգապահական պատժամիջոցներ կիրառել մինչխաղային ստուգման համար խաղադաշտ մտնելու պահից սկսած, մինչ եզրափակիչ սուլիչից հետո այն թողնելը (ներառյալ 11 մետրանոց հարվածաշարը): Եթե խաղացողը, մինչ խաղի սկիզբը խաղադաշտ մտնելը, կատարում է հեռացնան արժանի խախտում, ապա մրցավարն իրավասու է թույլ չտալ նրան մասնակցելու խաղին (տես Կանոն 3.6): Մրցավարը պետք է գեկուցագիր ներկայացնի ցանկացած այլ ոչ պատշաճ վարքագիր դրսնորման դեպքում:
- Մրցավարն իրավասու է ցույց տալ կարմիր կամ դեղին քարտեր և, Եթե դա թույլատրվում է մրցման կանոնակարգով, ժամանակավորապես հեռացնել խաղացողին, այն պահից սկսած, եթե խաղասկզբին մտնում է խաղադաշտ մինչև խաղի ավարտից հետո խաղադաշտից դուրս գալը, ներառյալ խաղամիջյան ընդմիջումը, լրացուցիչ ժամանակը և 11 մետրանոց հարվածաշարը:
- Միջոցներ է կիրառի թիմի պաշտոնյաների նկատմամբ, ովքեր իրենց պահում են ոչ պատշաճ և կարող է իր հայեցողությամբ նրանց հեռացնել խաղադաշտից և դրա հարակից տարածքից: Թիմի բժշկական անձնակազմի ներկայացուցիչը, ով կատարել է հեռացման արժանի խախտում կարող է մնալ, եթե թիմը չունի բժշկական անձնակազմի այլ ներկայացուցիչ և օգնություն գույքաբերի, եթե խաղացողը բժշկական ուշադրության կարիք ունենալը
- գործի խաղի այլ պաշտոնյաների խորհրդով՝ իր տեսադաշտից դուրս տեղի ունեցած միջադեպերի ժամանակ

## Վճառվածքներ

- թույլատրի շարունակել խաղը մինչ հաջորդ խաղադաշտը, եթե, խաղացողը ստացել է թերեւ վճառվածք
- կանգնեցնի խաղը, եթե խաղացողը ստացել է լուրջ վճառվածք և ապահովի նրա դուրս բերումը խաղադաշտից: Վճառվածք ստացած խաղացողը չի կարող օգնություն ստանալ խաղադաշտում և կարող է վերադառնալ միայն խաղը վերսկսելուց հետո: Եթե գնդակը խաղի մեջ է, ապա նա պետք է վերադառնա կողագծից, իսկ եթե գնդակը խաղի մեջ չէ՝ ցանկացած եզրագծից: Բացառություններ այս ընթացակարգում կարող են արվել, եթե.

- վնասվածք է ստացել դարպասապահը
- բախվել են դարպասապահն ու խաղաղաշտի խաղացող և օգնության կարիք ունեն
- բախվել են նույն թիմի խաղացողներ և օգնության կարիք ունեն
- լուրջ վնասվածք է տեղի ունեցել
- խաղացողը վնասվածք է ստացել ֆիզիկական հպումով խախտման հետևանքով, որի համար մրցակիցը գգուշացվել կամ հեռացվել է (օրինակ՝ անգիտակցորեն կամ կանոնների լուրջ խախտումով պայքար) և եթե բուժօգնությունը/ բուժզննումը կկատարվի արագ
- ապահովի, որ արյունահոսող վնասվածք ունեցող ցանկացած խաղացող թողնի խաղաղաշտը: Խաղացողը կարող է վերադառնալ խաղաղաշտ՝ մրցավարից ազդանշան ստանալուց հետո, ով իր հերթին պետք է համոզված լինի, որ արյունահոսությունը դադարել է և հանդերձանքի վրա արյան հետքեր չկա
- Եթե մրցավարը թույլատրել է բժիշկներին և/կամ պատգարակ տանողներին մտնել խաղաղաշտ, ապա խաղացողը պետք է թողնի խաղաղաշտը պատգարակով կամ ինքնուրույն: Եթե խաղացողը չի համաձայնվում, ապա նա պետք է գգուշացվի՝ ոչ սպորտային վարքագծի համար
- Եթե մրցավարը որոշել է գգուշացնել կամ հեռացնել վնասվածք ստացած խաղացողին, ով պետք է թողնի խաղաղաշտը բուժօգնություն ստանալու համար, ապա նա քարտը պետք է ցույց տա նախքան խաղացողի խաղաղաշտից դրւու գալը
- Եթե խաղը այլ պատճառով չի կանգնեցվել, կամ, եթե խաղացողի ստացած վնասվածքը «Խաղի կանոններ»-ի խախտման արյունք չէ, ապա մրցավարը պետք է խաղը վերսկսի «Վիճաբանական գնդակ»-ի նետումով

## **Արտաքին միջամտություն**

- կանգնեցնի, ժամանակավորապես կամ ընդհանրապես դադարեցնի խաղը՝ «Խաղի կանոններ»-ի ցանկացած խախտման կամ արտաքին միջամտության դեպքում, օրինակ, եթե.
  - լուսավորությունը բավարար չէ
  - հանդիսատեսի կողմից նետված իրը դիպչում է խաղի պաշտոնյային, խաղացողին կամ թիմի պաշտոնյային, ապա մրցավարը կարող է թույլատրել շարունակել, ժամանակավորապես կամ ընդհանրապես դադարեցնել խաղը՝ ելնելով միջադեպի լոցությունից
  - հանդիսատեսը սուլիչ է հնչեցնում, որը խանգարում է խաղին, ապա մրցավարը պետք է կանգնեցնի խաղը և վերսկսի այն «Վիճաբանական գնդակ»-ի նետումով

- Խաղի ժամանակ լրացուցիչ գնդակ, այլ իր կամ կենդանի է մտնում խաղաղաշտ, ապա մրցավարը պետք է.
  - կանգնեցնի խաղը (և վերսկսի «վիճաբանական գնդակ»-ի նետումով) միայն, եթե միջամտությունը խանգարում է խաղին, բացառությամբ, եթե միջամտությունը չի խանգարում պաշտպանվող խաղացողին խաղալու գնդակ, որն ընթանում է դեպի դարպասը և գոլ է մտնում: Այդ դեպքում գոլն արձանագրվում է (նույնիսկ եթե գնդակի հետ հպում է եղել), բացառությամբ եթե գնդակը մտնում է մրցակցի դարպասը
  - թույլատրի շարունակել խաղը, եթե դա չի խանգարում խաղին և պետք է հեռացնի այն առաջին հնարավորության դեպքում
- ապահովի, որ որևէ կողմնակի անձ չմտնի խաղաղաշտ

#### **4. Մրցավարի հանդերձանք**

##### **Պարտադիր հանդերձանք**

Մրցավարը պետք է ունենա հետևյալ հանդերձանքը.

- Սուլիչ ( ներ)
- Ժամացույց( ներ)
- Կարմիր և դեղին քարտեր
- Նորատետր( կամ այլ բան խաղի հետ կապված նշումներ կատարելու համար)

##### **Այլ հանդերձանք**

Մրցավարին կարող է թույլատրվել՝ օգտագործել

- Խաղի այլ պաշտոնյաների հետ հաղորդակցվելու պարագաներ - բիա ազդանշանով դրոշակներ, ականջակալներ և այլն
- EPTS կամ ֆիզապատրաստականությունը վերահսկող այլ համակարգեր

Մրցավարներին և խաղի այլ պաշտոնյաներին արգելվում է կրել զարդեղեն և որևէ այլ ելեկտրոնային պարագաներ:

#### **5. Մրցավարի ազդանշաններ**

##### ***Դիմումել մրցավարի հաստատված ազդանշանների նկարներից***

Ի լրումն գործող «Երկու ձեռքով» առավելության ազդանշանին, այժմ թույլատրվում է նմանատիպ «մեկ ձեռքով» ազդանշանը, քանի որ մրցավարներին միշտ չէ հարմար վազել երկու ձեռքերը պարզած:



Ազատ հարված



Տուգանային հարված



Առավելություն (1)



Առավելություն (2)



11 մետրանոց հարված



Կարմիր - դեղին քարտ



Անկյունային հարված



Դարված դարպասից

## 6. Խաղի պաշտոնյաների պատասխանատվություն

Մրցավարը կամ խաղի այլ պաշտոնյա պատասխանատու չէ.

- Խաղացողի, պաշտոնյայի կամ հանդիսատեսի ստացած ցանկացած վճառվածքի համար
- ցանկացած տեսակի սեփականությանը հասցված որևէ վճառի համար
- ցանկացած անհատի, ակումբի, կազմակերպության, ասոցիացիայի կամ մեկ այլ մարմնի ցանկացած այլ կորստի համար, որը հետևանք է կամ կարող է հետևանք լինել նրանց ընդունած ցանկացած որոշման՝ ըստ «Խաղի կանոններ»-ի կամ առնչվող խաղի կազմակերպմանն, անցկացմանն և անհրաժեշտ ընթացակարգերի հսկմանն

Այսպիսի որոշումները կարող են ներառել որոշում՝

- թույլատրե՞լ, թե՞ ոչ խաղի անցկացումը՝ ելնելով խաղադաշտի կամ նրա շրջակայքի վիճակից կամ եղանակային պայմաններից
- ինչ-որ պատճառով խաղն ավարտելու վերաբերյալ
- խաղադաշտի գույքի և խաղի ժամանակ օգտագործվող գնդակի համապատասխանության վերաբերյալ
- կանգնեցնե՞լ խաղը, թե՞ ոչ՝ հանդիսատեսի միջամտության կամ հանդիսատեսի համար նախատեսված գոտիներում ծագած ցանկացած խնդրի դեպքում
- կանգնեցնե՞լ խաղը, թե՞ ոչ, որպեսզի վճառվածք ստացած խաղացողը բուժօգնություն ստանալու համար դուրս բերվի խաղադաշտից
- պահանջել, որ վճառվածք ստացած խաղացողը բուժօգնություն ստանալու համար դուրս բերվի խաղադաշտից
- թույլատրե՞լ, թե՞ ոչ խաղացողին կրելու որոշակի հագուստ կամ հանդերձանք
- թույլատրե՞լ, թե՞ ոչ ( մրցավարի իրավասություն սահմաններում) ցանկացած անձի (ներառյալ՝ թիմի կամ մարզադաշտի պաշտոնյաներին, անվտանգության աշխատակիցներին, լուսանկարիչներին կամ այլ լրատվամիջոցների ներկայացուցիչներին) գտնվելու խաղադաշտի մերձակայքում
- ցանկացած այլ որոշում՝ համաձայն «Խաղի կանոններ»-ի կամ համապատասխան իր պարտականությունների, նախատեսված ըստ ՖԻՖԱ-ի, կոնֆեդերացիայի, ազգային ֆուտբոլային ասոցիացիայի կամ մոցման կանոնակարգով, որի հովանու տակ անցկացվում է խաղը

ԿԱՆՈՆ 06

# Խաղի այլ պաշտոնյաներ

Խաղին կարող են նշանակվել այլ պաշտոնյաներ (Երկու մրցավարի օգնականներ, չորրորդ պաշտոնյա, երկու մրցավարի լրացուցիչ օգնականներ և պահեստային մրցավարի օգնական): Նրանք պետք է աջակցեն մրցավարին հսկելու խաղը՝ հանաձայն «Խաղի կանոններ»-ի, սակայն վերջնական որոշումը միշտ պետք է կայացնի մրցավարը:

Խաղի պաշտոնյաներն աշխատում են մրցավարի ղեկավարությամբ: Անհարկի միջամտության կամ ոչ պատշաճ վարքագծի դրսնորման դեպքում, մրցավարը կարող է ազատել նրանց իրենց արտականությունների կատարումից և պետք է ղեկուցագիր ներկայացնի համապատասխան մարմիններին:

Բացառությամբ պահեստային մրցավարի օգնականի, նրանք աջակցում են մրցավարին, երբ տեղի են ունենում խախտումներ և իրենք ավելի լավ տեսադաշտ են ունենում քան մրցավարը: Նրանք պետք է ղեկուցագիր ներկայացնեն համապատասխան մարմիններին՝ մրցավարի և այլ խաղի պաշտոնյաների տեսադաշտից դուրս տեղի ունեցած ցանկացած ոչ պատշաճ վարքագծի դրսնորման կամ այլ միջադեպերի դեպքում: Ղեկուցագիրը կազմելիս նրանք պետք է խորհրդակցեն մրցավարի և խաղի այլ պաշտոնյաների հետ:

Խաղի պաշտոնյաներն օգնում են մրցավարին ստուգելու խաղադաշտը, գնդակները, խաղացողների հանդերձանքը (ներառյալ այն կարգի բերելուց հետո ստուգելը), կատարում են գրառումներ՝ կապված ժամանակի, գոլերի, ոչ պատշաճ վարքագծի դրսնորման վերաբերյալ և այլն:

Մրցման կանոնակարգը պետք է հստակ սահմանի, թե ով պետք է փոխարինի այն խաղի պաշտոնյային ով ի վիճակի չէ սկսել կամ շարունակել խաղը: Պետք է հստակեցվի նաև դրանից բխող փոփոխությունները: Մասնավորապես պետք է պարզ լինի թե ով է ստանձնելու մրցավարի դերը, երբ նա ի վիճակի չէ սկսել կամ շարունակել խաղը՝ չորրորդ պաշտոնյա՝ մրցավարի առաջին օգնակա՞նը, թե՝ մրցավարի առաջին լրացուցիչ օգնականը:

## **1. Մրցավարի օգնականներ**

Նրանք պետք է ազդանշան տան, երբ,

- գնդակն ամբողջությամբ դուրս է գալիս խաղաղաշտից ինչպես նաև, որ թիմը պետք է կատարի անկյունային հարվածը, դարպասից հարվածը կամ կողագծից նետումը
- «խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողը կարող է պատժվել
- պետք է կատարվի փոխարինում
- 11 մետրանոց հարվածների ժամանակ, մինչև գնդակին հարվածելը, դարպասապահը դարպասային գծից շարժվում է առաջ, և երբ գնդակը հատում է դարպասային գիծը: Եթե խաղին նշանակված են մրցավարի լրացուցիչ օգնականներ, ապա մրցավարի օգնականը պետք է դիրք գրավի 11 մետրանոց նշակետի ուղղությամբ

Մրցավարի օգնականի աջակցությունը իր մեջ ներառում է նաև փոխարինման ընթացակարգի հսկումը:

Մրցավարի օգնականը կարող է մտնել խաղաղաշտ, որպեսզի օգնի հսկել 9.15 մ (10 յարդ) հեռավորությունը:

## **2. ՉՈՐՐՈՐԴ ՊԱՇՏՈՆՅԱԿ**

Չորրորդ պաշտոնյանի աջակցությունը նաև ներառում է.

- փոխարինման ընթացակարգի հսկումը
- խաղացողի / փոխարինողի հանդերձանքը ստուգելը
- խաղացողի վերադարձի հսկելը՝ մրցավարի ազդանշանից/թույլատվությունից հետո
- գնդակների փոխարինման հսկումը
- այն նվազագույն ժամանակի ցույց տալը, որը մրցավարը մտադիր է ավելացնել յուրաքանչյուր խաղակեսին (ներառյալ լրացուցիչ ժամանակը)
- տեխնիկական գոտում գտնվող ցանկացած անձի անպատճանատու վարքագծի դրսնորման դեպքում՝ մրցավարին տեղեկացնելը

## **3. Մրցավարի լրացուցիչ օգնականներ**


Մրցավարի լրացուցիչ օգնականները կարող են ազդանշան տալ.

- Երբ գնդակն ամբողջությամբ հատում է դարպասային գիծը, ներառյալ, երբ գոլ է խփվում
- թե որ թիմը պետք է կատարի անկյունային կամ դարպասից հարվածը
- արդյոք 11 մետրանոց հարվածների ժամանակ, մինչև գնդակին հարվածելը, դարպասապահը դարպասային գծից շարժվել է առաջ, և արդյոք գնդակը հատել է դարպասային գիծը

## **4. Պահեստային մրցավարի օգնական**

Պահեստային մրցավարի օգնականի միակ պարտականությունն է փոխարինել մրցավարի օգնականին կամ չորրորդ պաշտոնյային, երբ նրանք ի վիճակի չեն շարունակել խաղը:

## 5. Մրցավարի օգնականների ազդանշաններ





Կողագծից նետում հարձակվողի օգտին

Կողագծից նետում պաշտպանի օգտին



Անկյունային հարված

Դարված դարպասից



Խաղից դուրս



Խաղից դուրս խաղաշտի  
մոտակա տարածքում



Խաղից դուրս խաղաշտի  
կենտրոնական տարածքում



Խաղից դուրս խաղաշտի  
հեռավոր տարածքում

**6. Մրցավարի լրացուցիչ օգնականների ազդանշաններ**



ԿԱՆՈՆ 07

# ԽԱՂԻ ՏԱՐԱԾԹՅՈՒՆԸ

## 1. Խաղակեսեր

Խաղը բաղկացած է 45 րոպեանոց երկու հավասար խաղակեսերից, որը կարող միայն կրճատվել, եթե խաղից առաջ մրցավարի և երկու թիմերի միջև ձեռք է բերվել համաձայնություն և դա համապատասխանում է մրցման կանոնակարգին:

## 2. Խաղակեսերի միջև ընդմիջում

Խաղացողները խաղակեսերի միջև ունեն ընդմիջման իրավունք, որը չպետք է գերազանցի 15 րոպեն: Լրացուցիչ ժամանակի խաղակեսերի միջև թույլատրովում է կարծ դադար ժույլ խմելու համար: Մրցաշարի կանոնակարգը պետք է սահմանի խաղակեսերի միջև ընդմիջման տևողությունը, որը կարող է փոփոխվել միայն մրցավարի թույլատրվամբ:

## 3. Կորսված ժամանակի փոխհատուցում

Յուրաքանչյուր խաղակեսում մրցավարի կողմից փոխհատուցվում է տվյալ խաղակեսում հետևյալ դեպքերի համար կորսված ամբողջ ժամանակը՝

- փոխարինումներ
- վնասվածք ստացած խաղացողների բուժգննում և / կամ խաղադաշտից դուրս բերում
- ժամանակի միտումնավոր ձգձգում
- կարգապահական պատժամիջոցներ
- ջրադադարներ կամ բժշկական նպատակով կատարված այլ դադարներ, որոնք թույլատրված են մրցման կանոնակարգով
- ցանկացած այլ պատճառներ, ներառյալ խաղի վերսկսումը ձգձգող ցանկացած էական պատճառ (օրինակ՝ գոլի տոնում)

Յուրաքանչյուր խաղակեսի վերջին րոպեի ավարտին չորրորդ պաշտոնյան պետք է ցույց տա մրցավարի կողմից որոշված նվազագույն ավելացվող ժամանակը: Ավելացվող ժամանակը մրցավարի կողմից կարող է ավելացվել, բայց ոչ կրճատվել:

Մրցավարը չպետք է փոխհատուցի առաջին խաղակեսի ժամանակի հետ կապված սխալը՝ փոփոխելով երկրորդ խաղակեսի տևողությունը:

## 4. 11 մետրանոց հարված

Եթե 11 մետրանոց հարված պետք է կատարվի կամ կրկնվի, ապա տվյալ խաղակեսի տևողությունը պետք է երկարաձգվի այնքան, մինչև հարվածն ավարտվի:

## 5. Չափարտված հանդիպում

Չափարտված հանդիպումը պետք է վերախաղարկվի, բացառությամբ, եթե մրցումների կանոնարգերը կամ կազմակերպիչներն այլ բան չեն նախատեսել:

ԿԱՆՈՆ 08

# Խաղի սկսումը և վերսկսումը

Սկզբնահարվածով սկսվում են խաղի երկու խաղակեսերը, լրացուցիչ ժամանակի երկու խաղակեսերը և խաղի վերսկսվումը՝ խփված գոլից հետո: Տուգանային / ազատ հարվածները, 11 մետրանոց հարվածները, կողագծից նետումները, դարպասից հարվածները և անկյունային հարվածները խաղը վերսկսելու այլ միջոցներ են (տես Կանոն 13-ից 17): «Վիճաբանական գնդակ»-ի նետումը խաղը վերսկսելու միջոց է, երբ մրցավարը կանգնեցնում է խաղը և Կանոնը չի նախատեսում վերը նշված վերսկսման միջոցներից որևէ մեկը:

Եթե խախտումը տեղի է ունենում, երբ գնդակը խաղի մեջ չէ, ապա խաղի վերսկսման եղանակը չի փոխվում:

## 1. Սկզբնահարված

### Ընթացակարգ

- Վիճականետումը շահած թիմը պետք է որոշի, թե որ դարպասին է հարձակվելու առաջին խաղակեսում
- Մրցակիցը պետք է կատարի սկզբնահարվածը
- Վիճականետումը շահած թիմը պետք է կատարի երկրորդ խաղակեսի սկզբնահարվածը
- Երկրորդ խաղակեսում թիմերը պետք է փոխվեն կիսադաշտերով և հարձակվեն հակառիր դարպասներին
- Դարպասի գրավումից հետո սկզբնահարվածը պետք է կատարվի մրցակցի կողմից

Յուրաքանչյուր սկզբնահարվածի ժամանակ.

- Բոլոր խաղացողները, քազառությամբ սկզբնահարվածը կատարող խաղացողի, պետք է գտնվեն սեփական կիսադաշտում
- Սկզբնահարվածը կատարող թիմի մրցակիցները պետք է գտնվեն գնդակից նվազագույնը 9.15 մ (10 յարդ) հեռավորության վրա՝ մինչ այն կմտնի խաղի մեջ
- Գնդակը պետք է անշարժ տեղադրված լինի խաղադաշտի կենտրոնում
- Մրցավարը պետք է ազդանշան տա
- Գնդակը խաղի մեջ է, երբ դրան հարվածում են ոտքով և այն տեսանելիորեն շարժվում է
- Սկզբնահարվածով անմիջապես կարելի է մրցակցին գոլ խփել: Եթե գնդակն անմիջապես մտնում է հարվածողի դարպասը, ապա մրցակցի օգտին պետք է նշանակվի անկյունային հարված:

## **Խախտումներ և պատժամիջոցներ**

Եթե սկզբնահարված կատարող խաղացողը կրկին դիպչում է գնդակին մինչ մեկ այլ խաղացող կդիպչի դրան, ապա պետք է նշանակվի ազատ հարված կամ տուգանային հարված՝ միտումնավոր ձեռքով խաղի համար:

Սկզբնահարվածի ընթացակարգի ցանկացած այլ խախտման դեպքում, այն պետք է կրկնվի:

### **2. «Վիճաբանական գնդակ»**

#### **Ընթացակարգ**

Մրցավարը պետք է կատարի «Վիճաբանական գնդակի» նետումը այնտեղ, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, երբ խաղը կանգնեցվել է դարպասային հրապարակում: Այդ դեպքում մրցավարը «Վիճաբանական գնդակ»-ի նետումը պետք է կատարի դարպասային գծին գուգահեռ դարպասային հրապարակի գծի այն կետում, որն անենամուն էր գնդակի գտնվելու տեղին խաղը կանգնեցնելիս:

Գնդակը խաղի մեջ է, եթե այն դիպչում է գետնին:

Ցանկացած թվով խաղացողներ կարող են մասնակցել «Վիճաբանական գնդակ»-ի նետմանը (ներառյալ դարպասապահները): Մրցավարը չի կարող որոշել թե ով իրավունք ունի մասնակցել «Վիճաբանական գնդակ»-ի նետմանը կամ պլանավորի դուռ հետագա ընթացքը:

## **Խախտումներ և պատժամիջոցներ**

«Վիճաբանական գնդակ»-ի նետումը պետք է կրկնվի, եթե-

- մինչ գնդակը գետնին դիպչելը այն դիպչում է խաղացողի
- գնդակը գետնին դիպչելուց հետո անմիջապես դուրս է օալիս խաղադաշտից առանց որևէ խաղացողի դիպչելու

Եթե «Վիճաբանական գնդակի» նետումից հետո գնդակը գոլ է մտնում առանց նվազագույնը երկու խաղացողների դիպչելու, ապա խաղը պետք է վերսկսվի.

- դարպասից հարվածով, եթե մտնի մրցակցի դարպասը
- անկյունային հարվածով, եթե մտնի սեփական դարպասը

ԿԱՆՈՆ 09

# Գնդակը խաղի մեջ է կամ խաղից դուրս

## 1. Գնդակը խաղից դուրս է

Գնդակը խաղից դուրս է, երբ.

- այն ամբողջությամբ դուրս է եկել դարպասային կամ կողային գծից՝ գետնի վրայով կամ օդով
- խաղը կանգնեցվել է մրցավարի կողմից

## 2. Գնդակը խաղի մեջ է

Գնդակը խաղի մեջ է մնացած ամբողջ ժամանակ, ներառյալ, երբ.այն անդրադարձվում է խաղի պաշտոնյայից, դարպասասյունից, հեծանից կամ անկյունային դրոշակից և մնում է խաղադաշտում:

ԿԱՆՈՆ 10

# Խաղի ելքի որոշումը

## 1. Գոլի արձանագրում

Գոլն արձանագրվում է, երբ գնդակն ամբողջությամբ հատում է դարպասային գիծը դարպասայուների միջև և հեծանից ներքև ընկած հատվածով, պայմանով, որ մինչ այդ գոլ խփող թիմի կողմից չի կատարվում «Խաղի Կանոնների» խախտում:

Եթե մրցավարը գոլն արձանագրելու ազդանշան է տալիս մինչ գնդակն ամբողջությամբ կհատի դարպասային գիծը, ապա խաղը պետք է վերսկսվի «Վիճաբանական գնդակ»-ի նետումով:

## 2. Հաղթող թիմ

Թիմը, որը խաղի ընթացքում ավելի շատ գոլ է խփում, համարվում է հաղթող: Եթե երկու թիմերը խփում են հավասար քանակությամբ գոլեր կամ գոլեր չեն խփում, ապա խաղն ավարտվում է ոչ-ոքի:

Եթե, մրցաշարի կանոնակարգը պահանջում է որոշել հաղթող թիմին ոչ-ոքի ավարտված խաղից հետո կամ դաշտի տեր-հյուր խաղերի արդյունքում, ապա հաղթողին որոշելու միակ բույլատրելի ընթացակարգերն են.

- մրցակցի դաշտում խփած գոլերի կանոնը
- լրացուցիչ ժամանակը, որը բաղկացած է իրար հավասար երկու խաղակեսերից, որոնցից լուրականչուրը չի գերազանցում 15 րոպեն
- 11 մետրանոց հարվածաշարը


## 3. 11 մետրանոց հարվածաշար

11 մետրանոց հարվածաշարը կատարվում է խաղից հետո, եթե այլ բան նախատեսված չէ: Պետք է գործեն համապատասխան «Խաղի Կանոններ»-ը:

### Ընթացակարգ

#### [Մինչև հարվածաշարի սկսելը](#)

Մրցավարը պետք է կատարի վիճականետում, որպեսզի որոշի այն դարպասը, որին պետք է կատարվեն հարվածները, բացառությամբ, եթե կամ այլ նկատառումներ (օրինակ. խաղային մակերևույթի որակը, անվտանգությունը և այլն): Դարպասը կարող է փոխվել միայն անվտանգության նկատառումներով, կամ եթե դարպասը կամ խաղային ծածկույթի որակը դառնում է ոչ պիտանի



- Մրցավարը կրկին պետք է կատարի վիճականետում և այն հաղթող թիմը պետք է որոշի կատարել առաջին, թե երկրորդ հարվածը
- Բացառությամբ այն փոխարինողի, ով կփոխարինի դարպասապահին, Եթե նա ի վիճակի չի լինի շարունակել, հարվածաշարին կարող են մասնակցել միայն այն խաղացողները ովքեր խաղավարտին գտնվել են խաղաղաշտում կամ ժամանակավորապես խաղաղաշտից դուրս (վնասվածք, հանդերձանքի կարգի բերել և այլն)
- Յուրաքանչյուր թիմ հարվածաշարին մասնակցելու իրավունքը ունեցող խաղացողներից պետք է ընտրի հարվածողներին և որոշի նրանց հերթականությունը: Մրցավարը հերթականության մասին չպետք է տեղեկացվի
- Եթե խաղավարտից հետո, մինչ հարվածաշարի սկիզբը կամ դրա ընթացքում թիմերից մեկն իր կազմում ունենում է ավելի շատ խաղացող, քան մրցակիցը, ապա այդ թիմը պետք է պակասեցնի իր խաղացողների քանակը՝ մրցակցի խաղացողների թվին հավասարեցնելու համար և մրցավարին պետք է ներկայացնի կազմից հարկադրաբար դուրս հանված յուրաքանչյուր խաղացողի անունը և համարը: Ցանկացած հանված խաղացող չի կարող մասնակցել հարվածաշարին (բացառությամբ ստորև նկարագրված դեպքերի)
- Եթե դարպասապահը հարվածաշարից առաջ կամ դրա ընթացքում ի վիճակի չի լինում շարունակել հարվածաշարը, ապա նա կարող է փոխարինվել այն խաղացողով, ով թիմերի կազմերո հավասարեցնելու պատճառով հարկադրաբար հանվել էր կամ, եթե նրա թիմը ուր չի օգտագործե մրցման կանոնակարգով սահմանված առավելագույն փոխարինումների քանակը՝ գրանցված փոխարինողով: Բայց հետագայում, փոխարինված դարպասապահը չի կարող մասնակցել հարվածաշարին և հարված կատարել

## Հարվածաշարի ընթացքում

- Միայն հարվածաշարին մասնակցելու իրավունքը ունեցող խաղացողները և խաղի պաշտոնյաներն իրավունքը ունեն գտնվել խաղաղաշտում
- Հարվածաշարին մասնակցելու իրավունքը ունեցող բոլոր խաղացողները, բացառությամբ հարված կատարողի և երկու դարպասապահների, պետք է գտնվեն խաղաղաշտի կենտրոնական շրջանագծի ներսում
- Հարված կատարողի թիմակից դարպասապահը պետք է մնա խաղաղաշտում, տուգանային հրապարակից դուրս, դարպասային գծի և տուգանային հրապարակի սահմանագծի հատման կետում
- Հարված կատարելու իրավունքը ունեցող խաղացողը կարող է տեղերով փոխվել դարպասապահի հետ
- Հարվածն ավարտվում է, եթե գնդակը դադարում է շարժվել, դուրս է գալիս խաղից կամ մրցավարը կանոնների որևէ խախտման համար կանգնեցնում է խաղը: Հարվածողը չի կարող երկրորդ անգամ խաղալ գնդակ
- Մրցավարը գրանցում է կատարված հարվածները
- Եթե դարպասապահը խախտում է կատարում և դրա արդյունքում հարվածը կրկնվելու է, ապա դարպասապահը պետք է զգուշացվի
- Եթե հարվածողը պատժվում է մի խախտման համար, որը կատարվել է հարվածը կատարելու մրցավարի ազդանշանից հետո, ապա այդ հարվածը պետք է գրանցվի որպես շեղ հարված (գոյ չէ) և հարվածողը պետք է զգուշացվի

- **Եթե և դարպասապիր, և հարվածողը միաժամանակ խախտում են կատարում.**
  - **Եթե հարվածը շեղ է կատարվում կամ հետ է մղվում, ապա հարվածը պետք է լոկվի և երկու խաղաղողներն էլ պետք է զգուշացվեն**
  - **Եթե գու է խփվում, ապա այն չպետք է արձանագրվի, հարվածը պետք է գրանցվի որպես շեղ(գու չէ) և հարվածողը պետք է զգուշացվի**

## **Ստորև նշված պայմանների համաձայն՝ երկու թիմերը պետք է կատարեն հնգական հարված**

- Թիմերը պետք է կատարեն հարվածները հաջորդաբար
- Եթե մինչ երկու թիմերի հնգական հարված կատարելը՝ թիմերից մեկը ավելի շատ գոլ է խփել, քան կարող է խփել մյուս թիմը, նույնիսկ, եթե լրացնի իր հինգ հարվածները, ապա հարվածաշարը պետք է դադարեցվի
- Եթե երկու թիմերի հնգական հարվածները կատարելուց հետո, հաշիվը հավասար է, ապա հարվածները պետք է շարունակվեն, մինչև միևնույն քանակի հարվածներից հետո՝ թիմերից մեկը մեկ գոլ ավելի խփի
- Յուրաքանչյուր հարված պետք է կատարվի տարբեր խաղացողների կողմից: Հարվածաշարին մասնակցելու իրավունքը ունեցող բոլոր խաղացողները պետք է կատարեն մեկական հարված, մինչև որևէ խաղացող իրավունք ունենա կատարել երկրորդ հարվածը
- Վերը նշված սկզբունքով շարունակվում է հետագա հարվածների հերթականությունը, բայց թիմը կարող է փոխել հարվածողների հերթականությունը
- Հարվածաշարի հարվածը չպետք է ձգձգվի, եթե խաղացողը դուրս է եկել խաղադաշտից: Այդ խաղացողի հարվածը պետք է «չեղյալ» համարվի (գոլ չէ), եթե նա հարվածը կատարելու համար ժամանակին չվերադառնա

## **Փոփոխություններ և հեռացումներ հարվածաշարի ժամանակ**

- Խաղացողը, փոխարինողը կամ փոխարինված խաղացողը կարող է զգուշացվել կամ հեռացվել
- Հեռացված դարպասապահը պետք է փոխարինվի հարվածաշարին մասնակցելու իրավունք ունեցող խաղացողով
- Ոչ դարպասապահ խաղացողը, ով չի կարող շարունակել, չի կարող փոխարինվել
- Մրցավարը չպետք է դադարեցնի հարվածաշարը, եթե թիմի խաղացողների քանակը նվազեցվել, դարձել է յոթից քիչ

ԿԱՆՈՆ 11

# «ԽԱՂԻՑ ԴՈՒՐՍ»

## 1. «Խաղից դուրս» դիրք

«Խաղից դուրս» դիրքում գտնվելը, խախտում չէ:

Խաղացողը «խաղից դուրս» դիրքում է, եթե.

- Նրա գլխի, մարմնի կամ ոտքի որևէ մաս գտնվում է մրցակցի կիսադաշտում (բացառությամբ միջնագիծի վրա) և
- Նրա գլխի, մարմնի կամ ոտքի որևէ մաս գտնվում է մրցակցի դարպասային գծին ավելի մոտ, քան միաժամանակ և գնդակը, և մրցակցի նախավերջին խաղացողը:

Սա չի վերաբերվում բոլոր խաղացողների, ներառյալ դարպասապահների ձեռքերին:

Խաղացողը «խաղից դուրս» դիրքում չէ, եթե նա նույն գծի վրա է.

- մրցակցի նախավերջին խաղացողի հետ կամ
- մրցակցի վերջին երկու խաղացողների հետ

## 2. «Խաղից դուրս» -ի խախտում

Թիմակցի գնդակին դիպչելու կամ խաղալու պահին «խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողը պատժվում է միայն, եթե նա ներգրավվում է ակտիվ խաղին, այն է.

- միջամտում է խաղին՝ խաղալով կամ դիպչելով գնդակին, որին դիպչել կամ, որը փոխանցել է թիմակիցը, կամ
- խանգարում է մրցակցին.
  - ակնհայտորեն փակելով նրա տեսադաշտը՝ խոչընդոտում է խաղալ գնդակ կամ ստանալ գնդակ խաղալու հնարավորություն, կամ
  - գնդակին տիրելու համար պայքարելով մրցակցի հետ, կամ
  - ակնհայտորեն փորձելով խաղալ գնդակ, որը մոտ է գտնվում իրեն, և այդ գործողությամբ ազդելով մրցակցի վրա, կամ
  - կատարելով ակնհայտ շարժում, որն ակնհայտորեն ազդում է գնդակ խաղալու հնարավորություն ունեցող մրցակցի վրա,

կամ

- ստանում է առավելություն՝ պայքարելով մրցակցի հետ կամ խաղալով գնդակ, որը
  - անդրադարձվել կամ շեղվել է դարպասայուներից, հեծանից, խաղի պաշտոնյանից կամ մրցակցից
  - միտումնավոր հետ է մղվել ցանկացած մրցակցի կողմից

Չի համարվում ստանալ առավելություն, եթե «խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողը, գնդակ է ստանում մրցակցից, ով միտումնավոր գնդակ է խաղացել (բացառությամբ, եթե որևէ մրցակցից միտումնավոր հետ մղել այն):

Միտումնավոր հետ մղումը դա այն է, եթե խաղացողը մարմնի որևէ մասով, բացառությամբ ձեռքերի,(դա չի վերաբերվում իր տուգանային հրապարակում գտնվող դարպասապահին) կանգնեցնում է կամ փորձում է կանգնեցնել դեպի դարպասը կամ դրան շատ մոտ գնացող գնդակը:

#### Այն իրավիճակներում, երբ.

- «խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողը շարժվում է դեպի մրցակցի ճանապարհը կամ կանգնած է մրցակցի ճանապարհին և խանգարում է նրան շարժվել դեպի գնդակը, ապա դա «խաղից դուրս» -ի խախտում է, եթե դա ազդում է մրցակցի գնդակ խաղայու հնարավորության կամ գնդակի համար պայքարելու վրա: Եթե խաղացողը շարժվում է դեպի մրցակցի ճանապարհը և խոշրնդուտում է մրցակցի առաջընթացը (օրինակ արգելափակում է մրցակցին), ապա այդ խախտումը պետք է պատժվի համաձայն Կանոն 12-ի:
- «խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողը, գնդակ խաղայու միտումով, շարժվում է դեպի գնդակը, բայց մինչ գնդակ խաղայու կամ գնդակ խաղայու փորձ կատարելու, կամ մրցակցի հետ գնդակի համար պայքարելու նրա նկատմամբ խախտում է կատարվում, ապա այդ խախտումը պետք է պատժվի, քանի որ դա կատարվել է մինչ «խաղից դուրս»-ի խախտումը
- խախտումը կատարվում է «խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողի նկատմամբ, ով արդեն խաղում կամ փորձում է խաղայ գնդակ, կամ մրցակցի հետ պայքարում է գնդակի համար, ապա պետք է պատժվի «խաղից դուրս»-ի խախտումը, քանի որ դա կատարվել է մինչև խախտումը

### **3. Խախտում չէ**

«Խաղից դուրս»-ի խախտում չէ, եթե խաղացողը գնդակ է ստանում անմիջապես.

- դարպասից հարվածից
- կողագծից նետումից
- անկյունային հարվածից

### **4. Խախտումներ և պատժամիջոցներ**

Եթե կատարվում է «Խաղից դուրս»-ի խախտում, ապա մրցավարը պետք է նշանակի ազատ հարված խախտման տեղից, ներառյալ, եթե դա խախտում կատարած խաղացողի սեփական կիսադաշտում է:

Եթե պաշտպանվող խաղացող առանց մրցավարի թույլտվության, թողնում է խաղադաշտը, ապա «Խաղից դուրս»-ը որոշելիս, նա պետք է համարվի տեղակայված սեփական դարպասային գծի կամ կողագծի վրա մինչ մոտակա խաղադադարը կամ մինչ պաշտպանվող թիմը գնդակը դուրս կհանի սեփական տուգանային հրապարակից՝ դեպի միջնագիծ:

Եթե խաղացողը միտումնավոր է թողել խաղադաշտը, ապա նա մոտակա խաղադադարին պետք է զգուշացվի:

Խաղին ակտիվ չներգրավվելու համար հարձակվողը կարող է քայլ կատարել կամ մնալ խաղադաշտից դուրս: Եթե նա դարպասային գծից վերադառնում է խաղադաշտ և ներգրավվում խաղին մինչ մոտակա խաղադադարը կամ մինչ պաշտպանվող թիմը գնդակը դուրս կհանի սեփական տուգանային հրապարակից՝ դեպի միջնագիծ, ապա «Խաղից դուրս» որոշելիս նա պետք է համարվի դարպասային գծի վրա կանգնած: Եթե խաղացողը միտումնավոր դուրս է գալիս և առանց մրցավարի թույլտվության վերադառնում խաղադաշտ՝ չպատժվելով «Խաղից դուրս» դիրքում գտնվելու համար, բայց ստանալով առավելություն, ապա նա պետք է զգուշացվի:

Եթե գնդակը դարպաս մտնելիս, հարձակվողը անշարժ մնացել է դարպասայուներով և դարպասացանցով սահմանափակված տարածքում, ապա գոլը պետք է արձանագրվի, բացառությամբ այն դեպքերի, եթե խաղացողը կատարել է «Խաղից դուրս»-ի կամ Կանոն 12-ի խախտում, որի դեպքում խաղը պետք է վերսկսվի ազատ կամ տուգանային հարվածով:

ԿԱՆՈՆ 12

# Կանոնների խախտումներ և ոչ պատշաճ վարքագիծ

Խախտումների համար տուգանային / ազատ և 11մ հարվածներ կարող են նշանակվել միայն, եթե գնդակը խաղի մեջ է:

## 1. Տուգանային հարված

Տուգանային հարված նշանակվում է, եթե մրցավարի գնահատմամբ խաղացողը անզգուշորեն (careless), անգիտակցորեն (reckless) կամ օգտագործելով չափազանց մեծ ուժ (using excessive force) մրցակցի նկատմամբ կատարում է հետևյալ խախտումներից որևէ մեկը.

- հարձակվում է մրցակցի վրա
- թռչում է մրցակցի վրա
- ոտքով հարվածում կամ փորձում է հարվածել մրցակցին
- հրում է մրցակցին
- հարվածում կամ փորձում է հարվածել մրցակցին (ներառյալ գլխով)
- սահանկումով հարձակվում է մրցակցի վրա կամ նետվում է նրա վրա
- ոտք է զցում կամ փորձում է ոտք գցել մրցակցին

Եթե խախտման ժամանակ եղել է իպում, ապա այն պետք է պատժվի տուգանային կամ 11 մետրանոց հարվածով:

- «Անզգուշորեն» - եթե խաղացողը պայքարելիս ցուցաբերում է անզգուշություն կամ անշրջահայացություն: Կարգապահական պատժամիջոց չպետք է կիրառվի:
- «Անգիտակցաբար» - եթե խաղացողը գործում է անտեսելով մրցակցին սպառնացող վտանգը և դրա հետևանքը և պետք է զգուշացվի:
- «Օգտագործելով չափազանց մեծ ուժ» - եթե խաղացողը գերազանցում է անհրաժեշտ ուժի օգտագործումը և մրցակցին վնասվածք հասցնելու վտանգ է առաջացնում և պետք է հեռացվի:

Տուգանային հարված նշանակվում է, եթե խաղացողը կատարում է հետևյալ խախտումներից որևէ մեկը.

- միտումնավոր ձեռքով գնդակ է խաղում (բացի սեփական տուգանային հրապարակում գտնվող դարպասապահից)
- բռնում է մրցակցին
- հպումով խոչընդոտում է մրցակցին
- թքում է մրցակցի վրա

Տես նաև Կանոն 3 – ում նկարագրված խախտումները:

### **Ձեռքով գնդակ խաղալ**

Ձեռքով գնդակ խաղալը դա խաղացողի կողմից դաստակով կամ ձեռքով գնդակին հպվելու միտումնավոր գործողությունն է:

Պետք է հաշվի առնվի հետևյալը.

- ձեռքի շարժումը դեպի գնդակը (ոչ գնդակի շարժումը դեպի ձեռքը)
- մրցակցի և գնդակի միջև հեռավորությունը (անսպասելի գնդակ)
- ձեռքի դիրքը, դեռ պարտադիր չի նշանակում, որ խախտում է կատարվել
- ձեռքում բռնած իրով (հանդերձանքի մաս, սրնքակալ և այլն) գնդակին հպվելը խախտում է
- նետած իրով (խաղակոչիկ, սրնքակալ և այլն) գնդակին հարվածելը խախտում է

Տուգանային հրապարակից դուրս ձեռքով գնդակ խաղալու համար դարպասապահի վրա տարածվում են նույն սահմանափակումները, ինչ որ ցանկացած այլ խաղացողի: Դարպասապահը սեփական տուգանային հրապարակում չի կարող մեղավոր ճանաչվել ձեռքով գնդակ խաղալու համար և պատժվել տուգանային հարվածով կամ դրա հետ կապված ցանկացած այլ պատժամիջոցով, սակայն ձեռքով գնդակ խաղալու համար նա կարող է մեղավոր ճանաչվել այն դեպքերում, երբ դա պատժվում է ազատ հարվածով:

## **2. Ազատ հարված**

Ազատ հարված նշանակվում է, եթե խաղացողը.

- վտանգավոր է խաղում
- առանց որևէ հպման խոչընդոտում է մրցակցի առաջընթացը
- մեղավոր է անհանաձայնություն արտահայտելու, վիրավորական, նվաստագուցիչ կամ անվայել խոսքեր/ԺԵՍՄԵՐ օգտագործելու կամ այլ բանավոր խախտումներ կատարելու համար
- խանգարում է դարպասապահին գնդակը ձեռքից բաց բողնելիս կամ հարվածում կամ փորձում է հարվածել գնդակին, եթե դարպասապահը փորձում էր ազատվել գնդակից
- կատարում է կանոններում չնշված ցանկացած այլ խախտում, որի համար խաղը կանգնեցվել է՝ խաղացողին զգուշացնելու կամ հեռացնելու համար

Ազատ հարված նշանակվում է, երբ դարպասապահը իրենց տուգանային հրապարակում կատարում է հետևյալ խախտումներից որևէ մեկը.

- պահում է գնդակը ձեռքերում վեց վայրկյանից ավելի, մինչ այն դուրս կթողնի իր տիրապետումից
- ձեռքերով դիպչում է գնդակին.
  - այն իր տիրապետումից թողնելուց հետո, մինչ դրան կդիպչի այլ խաղացող
  - թիմակիցի միտումնավոր ոտքով փոխանցումից հետո
  - թիմակիցի կատարած կողագծից նետումից

Գնդակը համարվում է դարպասապահի տիրապետության տակ, երբ.

- գնդակը նրա ձեռքերի մեջ է կամ ձեռքի և որևէ մակերևույթի (օրինակ՝ գետնի, սեփական մարմնի) միջև է կամ, երբ նա դաստակով կամ ձեռքով հպվում է գնդակին, բացառությամբ, երբ գնդակը պատահաբար անդրադառնում է դարպասապահից կամ դարպասապահը հետ է մղում այն
- գնդակը պահում է իր բացած ձեռքի ափով
- գնդակը հարվածում է գետնին կամ օդ է նետում

Եթե դարպասապահը ձեռքերով տիրապետում է գնդակը, ապա մրցակիցը չի կարող պայքարել նրա հետ:

## Խաղալ վտանգավոր

Վտանգավոր խաղալը դա գործողություն է, երբ փորձելով խաղալ գնդակ խաղացողը առաջացնում է վնասվածք հասցնելու վտանգ ինչ որ մեկին (այդ թվում՝ ինքն իրեն) և ներառում է, երբ մոտ գտնվող մրցակիցը զրկվում է գնդակ խաղալու հնարավորությունից՝ վնասվածք ստանալու մտավախության պատճառով:

Մկրատաձև հարվածը թույլատրելի է, պայմանով, որ վտանգավոր չլինի մրցակիցին համար:

## Առանց հպման մրցակիցի առաջընթացը խոչընդոտելը

Մրցակիցի առաջընթացը խոչընդոտել նշանակում է՝ շարժվել դեպի մրցակիցի շարժման ուղին, խոչընդոտելով, շրջափակելով, դանդաղեցնելով կամ ստիպելով նրան փոխելու շարժման ուղղությունը, երբ գնդակը խաղային տարածության մեջ չէ այդ խաղացողներից:

Բոլոր խաղացողներն իրավունք ունեն դիրքավորվել խաղաղաշտում: Մրցակից ուղու վրա գտնվելը դա նույնը չէ, ինչ շարժվել դեպի մրցակիցի ուղին:

Խաղացողը կարող է շրջափակել գնդակը դիրքավորվելով գնդակի և մրցակցի միջև, եթե գնդակը խաղային տարածության մեջ է և ինքը մրցակցին չի բռնում ձեռքերով կամ մարմնով: Եթե գնդակը խաղային տարածության մեջ է, խաղացողը կարող է ճիշտ հարձակման ենթարկվել մրցակցի կողմից:

### 3. Կարգապահական պատժամիջոց

Մրցավարն իրավասու է կարգապահական պատժամիջոց կիրառել մինչխաղային ստուգման համար խաղադաշտ մտնելու պահից սկսած, մինչ եզրափակիչ սուլիչից հետո այն թողնելը (Աերառյալ 11 մետրանոց հարվածաշարը):

Եթե խաղացողը, մինչ խաղի սկիզբը խաղադաշտ մտնելը, կատարում է հեռացման արժանի խախտում, ապա մրցավարն իրավասու է թույլ չտալ նրան մասնակցելու խաղին (տես 3.6): Մրցավարը պետք է գեկուցագիր ներկայացնի ցանկացած ոչ պատշաճ վարքագծի դրսնորման դեպքում:

Խաղացողը, ով կատարում է զգուշացման կամ հեռացման արժանի խախտում, խաղադաշտում կամ դրա սահմաններից դուրս մրցակցի, թիմակցի, խաղի պաշտոնյաների կամ ցանկացած այլ անձի հանդեպ կամ խախտում է խաղի կանոնները, պետք է պատժվի՝ համաձայն կատարած խախտման բնույթի:

Դեղին քարտը նշանակում է զգուշացում, իսկ կարմիր քարտը՝ հեռացում:

Կարմիր և դեղին քարտ կարող է ցույց տրվել միայն խաղացողին, փոխարինողին կամ փոխարինված խաղացողին:

### Քարտ ցույց տալու համար՝ խաղի վերսկսման ձգձգում

Եթե մրցավարն որոշել է զգուշացնել կամ հեռացնել խաղացողին, ապա խաղը չպետք է վերսկսվի, մինչև պատժամիջոցը կիրառվի:

### Առավելություն

Եթե մրցավարը կիրառել է առավելություն տալու սկզբունքը այն խախտման համար, որը նախատեսում է զգուշացում / հեռացում, ապա այս զգուշացումը / հեռացումը պետք է տրվի մոտակա խաղադաշտին, բացառությամբ, եթե ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու փորձից հետո գոլ է խփվել: Այդ դեպքում խախտում կատարած խաղացողը պետք է զգուշացվի ոչ սպորտային վարքագծի համար:

Կանոնների լուրջ խախտման, բռնարարքի կամ երկրորդ զգուշացման արժանի խախտման դեպքում չպետք է կիրառվի առավելություն տալու սկզբունքը, բացառությամբ, եթե կա գոլ խփելու ակնհայտ հնարավորություն: Մրցավարը պետք է հեռացնի խաղացողին մոտակա խաղադաշտին, բայց եթե մինչ այդ խաղացողը խաղա գնդակ կամ պայքարի / խանգարի մրցակցին, ապա մրցավարը պետք է կանգնեցնի խաղը, հեռացնի խաղացողին և այն

Վերսկսի ազատ հարվածով, բազառությամբ, եթե խաղացողը կատարել է ավելի լուրջ խախտում:

Եթե պաշտպանը սկսում է բռնել հարձակվողին տուգանային հրապարակից դուրս և շարունակում է դա տուգանային հրապարակի ներսում, ապա մրցավարը պետք է նշանակի 11 մետրանոց հարված:

## Զգուշացման արժանի խախտումներ

Խաղացողը գգուշացվում է, եթե.

- ձգձգում է խաղի վերսկսումը
- բառերով կամ գործողությամբ անհամաձայնություն է արտահայտում
- խաղադաշտ է մտնում, վերադառնում կամ միտումնավոր թողնում այն առանց մրցավարի թույլատվության
- չի պահպանում սահմանված հեռավորությունը անկյունային, տուգանային/ազատ հարվածով կամ կողագծից նետմամբ խաղը վերսկսելիս
- սիստեմատիկ խախտում է «Խաղի կանոններ»-ը (չկա խախտումների կոնկրետ քանակ կամ բնորոշում, որը հաստատում է «սիստեմատիկության» առկայությունը)
- դրսնորում է ոչ սպորտային վարքագիծ

Փոխարինողը կամ փոխարինված խաղացողը գգուշացվում է, եթե.

- ձգձգում է խաղի վերսկսումը
- բառերով կամ գործողությամբ անհամաձայնություն է արտահայտում
- խաղադաշտ է մտնում կամ վերադառնում առանց մրցավարի թույլատվության
- դրսնորում է ոչ սպորտային վարքագիծ

## Զգուշացումներ ոչ սպորտային վարքագծի համար

Կան տարբեր հանգանաքներ, երբ խաղացողը պետք է գգուշացվի ոչ սպորտային վարքագծի համար, ներառյալ, եթե խաղացողը.

- փորձում է խաբել մրցավարին, օրինակ՝ ձևացնում է վճասվածք, կամ ցույց է տալիս, թե իր իր նկատմամբ խախտում է կատարվել (կեղծակերպ արարք)
- խաղի ընթացքում փոխում է տեղը դարպասապահի հետ կամ կատարում է դա առանց մրցավարի թույլատվության
- անգիտակցորեն կատարում է տուգանային հարվածով պատժվող խախտում
- ձեռքով գնդակ է խաղում՝ խանգարելով զարգացնել կամ խափանելով մրցակցի հեռանկարային գրոհը
- կատարում է խախտում, որով խանգարում է զարգացնել կամ խափանում է մոզակցի հեռանկարային գրոհը, բազառությամբ, եթե մրցավարը նշանակում է 11 մետրանոց հարված այն խախտման համար, որը կատարվել է գնդակ խաղալու փորձ կատարելիս
- գոկում է մոզակցին ակնհայտ գոյ խիելու հնարավորությունից այնպիսի խախտումով, որը կատարվել է գնդակ խաղալու փորձ կատարելիս, որի համար մրցավարը նշանակել է 11 մետրանոց հարված

- ձեռքով գնդակ է խաղում՝ փորձելով գոլ խփել (անկախ նրանից, փորձը հաջո՞ղ է, թե՞ ոչ) կամ գոլը կանխելու անհաջող փորձ է կատարում
- խաղադաշտում կատարում է չրույլատրվող գժանշումներ
- մրցավարից խաղադաշտը թողնելու բույլատվությունը ստանալուց հետո խաղում է գնդակ, երբ դուրս էր գալիս խաղադաշտից
- ցուցաբերում է անհարգալից վերաբերնունք խաղի նկատմամբ
- միտումնավոր հնարք է օգտագործում, որպեսզի գնդակը գլխով, կրծքով, ծնկով և այլն, փոխանցի իր դարպասապահին, «Խաղի կանոններ»-ը շրջանցելու նպատակով (ներառյալ տուգանային/ազատ հարվածը), անկախ այն բանից, դարպասապահը դիպչո՞ւմ է գնդակին ձեռքով, թե՞ ոչ
- բառերով շեղում է մրցակցին խաղի ընթացքում կամ այն վերսկսելիս

## **Գոլի տոնում**

Գոլ խփելուց հետո, խաղացողները կարող են տոնել այն, բայց դա չպետք է դուրս գա բույլատրելի սահմաններից: Չեն խրախուսվում «խորեոգրաֆիկ» տոնումները, որոնք շատ ժամանակ են խլում:

Գոլը տոնելու համար խաղադաշտից դուրս գալը՝ զգուշացման արժանի խախտում չէ, սակայն խաղացողները պետք է վերադառնան որքան հնարավոր է շուտ:

Խաղացողը պետք է զգուշացվի, եթե.

- մագլցում է պաշտպանից ցանկապատը և/կամ մոտենում է համեմատեսին այնպիսի եղանակով. որն առաջացնում է ապահովության և/կամ անվտանգության հետ կապված խնդիրներ
- կատարում է սաղրիչ, ծաղրող կամ բորբոքող ժեստեր կամ գործողություններ
- ծածկում է գլուխը կամ երեսը դիմակով կամ նմանատիպ այլ առարկայով
- հանում է մարզաշապիկը կամ դրանով ծածկում գլուխը

## **Խաղի վերսկսման ձգձգում**

Մրցավարները պետք է զգուշացնեն այն խաղացողներին, ովքեր ձգձգում են խաղի վերսկսումը.

- պատրաստվում է կատարել կողագծից նետումը, բայց հետո անսպասելի թողնում է գնդակը թիմակցին
- ձգձգում է խաղադաշտից դուրս գալը՝ լինելով փոխարինված
- չափից երկար է ձգձգում խաղի վերսկսումը
- մրցավարի կողմից խաղը կանգնեցնելուց հետո մի կողմ է հարվածում կամ ձեռքում է պահում գնդակը կամ հրահրում է կոնֆրոնտացիա՝ միտումնավոր գնդակին հպվելով
- սխալ տեղից է կատարում տուգանային/ազատ հարվածը, միտումով, որ մրցավարը, հարվածը կրկնելու հրահանգ տա

## Հեռացման արժանի խախտումներ

Խաղացողը, փոխարինողը կամ փոխարինված խաղացողը պետք է հեռացվի, եթե կատարում է հետևյալ խախտումներից որևէ մեկը.

- գրկում է մրցակցին գոլից կամ ակնհայտ գոլային հնարավորությունից՝ ձեռքով միտումնավոր գնդակ խաղալով (բացառությամբ սեփական տուգանային հրապարակում գտնվող դարպասապահի)
- կատարելով տուգանային/ազատ հարվածով պատժվող խախտում (բացառությամբ ստորև նշարագրվածի), գրկում է գոլից կամ ակնհայտ գոլային հնարավորությունից մրցակցին, որի շարժումը ընդհանուր առնամբ միտված է դեպի խախտում կատարողի դարպասը
- կատարում է Կանոնների լուրջ խախտում
- թքում է մրցակցի կամ մեկ այլ անձի վրա
- կատարում է բռնարարը
- օգտագործում է վիրավորական, նվաստացուցիչ, անվայել խոսքեր կամ ժեստեր
- նույն խաղում ստանում է երկրորդ գգուշացումը

Հեռացված խաղացողը, փոխարինողը կամ փոխարինված խաղացողը պետք է թողնի խաղաղաշտի մերձակայքը և տեխնիկական գոտին:

### Գոլից կամ գոլ խփելու ակնհայտ հնարավորությունից գրկելը

Եթե խաղացողը միտումնավոր ձեռքով գնդակ խաղալով մրցակցին գրկում է գոլից կամ ակնհայտ գոլային հնարավորությունից, ապա նա պետք է հեռացվի խաղաղաշտից՝ անկախ այն բանից թե որտեղ է կատարվել խախտումը:

Եթե խաղացողը սեփական տուգանային հրապարակում մրցակցի նկատմամբ խախտում է կատարում, որով գրկում է նրան ակնհայտ գոլային հնարավորությունից և մրցավարը նշանակում է 11 մետրանոց հարված, ապա խախտում կատարած խաղացողը պետք է գգուշացվի, եթե խախտումը կատարվել է գնդակ խաղալու փորձ կատարելիս: Մնացած բոլոր դեպքերում (օրինակ բռնել / պահել, քաշել, հրել, գնդակ խաղալու հնարավորություն չունենալ և այլն) խախտում կատարած խաղացողը պետք է հեռացվի:

Եթե խաղացողը, հեռացված խաղացողը, փոխարինողը կամ փոխարինված խաղացողը առանց մրցավարի թույլատվության մտնում է խաղաղաշտ և միջամտում խաղին կամ խանգարում է մրցակցին և որանով գրկում մրցակցին գոլից կամ ակնհայտ գոլ խփելու հնարավորությունից, ապա նա մեղավոր է հեռացման արժանի խախտում կատարելու համար:

Պետք է հաշվի առնվի հետևյալը.

- խախտման տեղի և դարպասի միջև եղած հեռավորությունը
- խաղի հիմնական ուղղությունը
- գնդակին տիրելու կամ վերահսկելու հավանականությունը
- պաշտպանների քանակն ու դիրքերը

## Կանոնների լուրջ խախտում

Սահանկումը կամ պայքարը, որը սպառնում է մրցակցի առողջությանը կամ կատարվում է չափազանց մեծ ուժով կամ դաժանությամբ, պետք է որակվի որպես Կանոնների լուրջ խախտում:

Ցանկացած խաղացող, ով գնդակի համար պայքարում, դիմացից, կողքից կամ ետևից, մեկ կամ երկու ոտքերն օգտագործելով, նետվում է մրցակցի վրա, կիրառելով չափազանց մեծ ուժ կամ սպառնալով նրա առողջությանը, մեղավոր է Կանոնների լուրջ խախտում կատարելու համար:

## Բռնարարք

Բռնարարքը դա այն է, երբ խաղացողը գնդակի համար չպայքարելով, մրցակցի դեմ օգտագործում կամ փորձում է օգտագործել չափազանց մեծ ուժ կամ դաժանություն։ Բռնարարք է նաև եթե խաղացողը նույնը կատարում է թիմակցի, թիմի պաշտոնյայի, խաղի պաշտոնյայի, հանդիսատեսի կամ այլ անձի նկատմամբ։ Վերը նկարագրվածը պետք է որակվի որպես բռնարարք նույնիսկ, եթե հպում չի եղել։

Ի լրում, խաղացողը պատժվում է բռնարարք կատարելու համար նաև, եթե գնդակի համար չպայքարելով միտումնավոր ձեռքով հարվածում է մրցակցի կամ մեկ այլ անձի գլխին կամ դեմքին, բացառությամբ եթե օգտագործված ուժն աննշան է։

## Խախտումներ, երբ իր (կամ գնդակ) է նետվում

Բոյոր դեպքերում մրցավարող պետք է կիրարաջի համապատասխան կարգապահական գործողություն։

- անգիտակցորեն – պետք է զգուշացնի խախտում կատարողին՝ ոչ սպորտային վարքագծի համար
- օգտագործելով չափազանց մեծ ուժ - պետք է հեռացնի խախտում կատարողին՝ բռնարարքի համար

#### **4. Խաղի վերսկսում՝ խախտումներից և ոչ պատշաճ վարքագծից հետո**

- Եթե գնդակը խաղի մեջ չէ, ապա այն պետք է վերսկսվի նախորդ որոշման համաձայն
- Եթե գնդակը խաղի մեջ է և խաղացողը խախտում է կատարում խաղադաշտում.
  - մրցակցի նկատմամբ, ապա պետք է նշանակվի ազատ/տուգանային կամ 11մետրանոց հարված
  - թիմակցի, փոխարինողի, փոխարինված կամ հեռազված խաղացողի, թիմի պաշտոնյայի կամ խաղի պաշտոնյայի նկատմամբ, ապա պետք է նշանակվի տուգանային կամ 11 մետրանոց հարված
  - ցանկացած այլ անձի նկատմամբ, ապա պետք է նշանակվի «Վիճաբանական գնդակի» նետում
- Եթե, երբ գնդակը խաղի մեջ է.
  - Խաղացողը խաղադաշտից դուրս խախտում է կատարում խաղի պաշտոնյայի կամ մրցակից խաղացողի, փոխարինողի, փոխարինված կամ հեռազված խաղացողի կամ թիմի պաշտոնյայի նկատմամբ կամ
  - փոխարինողը, փոխարինված կամ հեռազված խաղացողը կամ թիմի պաշտոնյան խաղադաշտից դուրս մրցակից թիմի խաղացողի կամ խաղի պաշտոնյայի նկատմամբ խախտում է կատարում կամ խանգարում է նրա գործողություններին,

ապա խաղը պետք է վերսկսվի տուգանային/ազատ հարվածով եզրագծի այն կետից, որն ամենամոտն է խախտման/միջամտության տեղին և եթե այդ կետը խախտում կատարողի տուգանային հրապարակում է, իսկ խախտումը պետք է պատժվեր տուգանային հարվածով, ապա պետք է նշանակվի 11 մետրանոց հարված:

Եթե խաղադաշտից դուրս կամ ներս կանգնած խաղացողը իր (ներառյալ գնդակը) է նետում մրցակից խաղացողի, փոխարինողի, փոխարինված կամ հեռազված խաղացողի կամ թիմի պաշտոնյայի, խաղի պաշտոնյայի կամ գնդակի վրա, ապա խաղը պետք է վերսկսվի տուգանային հարվածով այնտեղից որտեղ իրը դիպչել կամ կարող էր դիպչել այդ անձին կամ գնդակին: Եթե այս անձը գտնվում էր խաղադաշտից դուրս, ապա տուգանային/ազատ հարվածը պետք է կատարվի եզրագծի ամենամոտ տեղից: Պետք է նշանակվի 11 մետրանոց հարված, եթե դա խախտում կատարողի տուգանային հրապարակում է:

Եթե փոխարինողը, փոխարինված կամ հեռազված խաղացողը, ժամանակավորապես խաղադաշտից դուրս գտնվող խաղացողը կամ թիմի պաշտոնյան իր է նետում կամ ուրով հարվածում է դրան դեպի խաղադաշտ և դա միջամտում է խաղին, մրցակցին կամ խաղի պաշտոնյային, ապա խաղը պետք է վերսկսվի տուգանային հարվածով (11 մետրանոց հարվածով) այնտեղից, որտեղ իրը միջամտել է խաղին կամ դիպչել կամ կարող էր դիպչել մրցակցին, խաղի պաշտոնյային կամ գնդակին:

ԿԱՆՈՆ 13

# ՏՈՒԳԱՆԱՅԻՆ/ԱԶԱՏ ՀԱՐՎԱԾՆԵՐ

## 1. Հարվածների տեսակներ

Տուգանային և ազատ հարվածները նշանակվում են խախտում կատարած խաղացողի մրցակից թիմի օգտին:

### Ազատ հարվածի ազդանշան

Մրցավարը ազատ հարվածի ազդանշան է տալիս՝ ձեռքը գլխից վեր բարձրացնելով: Նա ձեռքը պետք պահի այդ դիրքում, մինչև հարվածից հետո գնդակը դիպչի մեկ այլ խաղացողի կամ դուրս գա խաղից:

Ազատ հարվածը պետք է կրկնվի, եթե մրցավարը մոռացել է ցույց տալ ազատ հարվածի ազդանշանը և հարվածից հետո գնդակն ուղղակիորեն գոլ է մտել:

### Գնդակը գոլ է մտնում

- Եթե գնդակը տուգանային հարվածից անմիջապես մտնում է մրցակցի դարպասը, ապա գոլն արձանագրվում է
- Եթե գնդակը ազատ հարվածից անմիջապես մտնում է մրցակցի դարպասը, ապա նշանակվում է հարված դարպասից
- Եթե գնդակը ազատ կամ տուգանային հարվածից անմիջապես մտնում է սեփական դարպասը, ապա նշանակվում է անկյունային հարված

## 2. Ընթացակարգ

Բոլոր տուգանային / ազատ հարվածները կատարվում են այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը, բացառությամբ.

- Դարպասային հրապարակում կատարված խախտնան համար, հարձակվող թիմի օգտին նշանակված ազատ հարվածները պետք է կատարվեն դարպասային գծին զուգահեռ՝ դարպասային հրապարակի գծի այն կետից, որն ամենամոտն է խախտնան տեղին
- Սեփական դարպասային հրապարակում, պաշտպանվող թիմի օգտին նշանակված տուգանային / ազատ հարվածները կարող են կատարվել այդ հրապարակի ցանկացած կետից

- տուգանային / ազատ հարվածները, որոնք նշանակվում են, եթե խաղացողը առանց նրավարի թույլտվության մտնում, վերադաշնում է խաղադաշտ կամ դուրս է գալիս խաղադաշտից, պետք է կատարվեն այնտեղից, որտեղ գտնվել է գնդակը խաղը կանգնեցնելիս: Այնուամենայնիվ, եթե խաղացողը դուրս է գալիս խաղադաշտից՝ որպես խաղի մաս և մեկ այլ խաղացողի նկատմամբ խախտում է կատարում, ապա խաղը պետք է վերսկսվի տուգանային / ազատ հարվածով՝ եզրագծի այն կետից, որն ամենամոտն է խախտման տեղին և եթե այդ կետը խախտում կատարողի տուգանային հրապարակում է, իսկ խախտումը պետք է պատժվեր տուգանային հարվածով, ապա պետք է նշանակվի 11 մետրանոց հարված
- Կանոնը նախատեսում է այլ դիրք (տես Կանոն 3, 11, 12)

#### Գնդակը.

- պետք է գտնվի անշարժ վիճակում, և հարվածողը չպետք է կրկին դիմէջի գնդակին, մինչ դրան կրկին մեկ այլ խաղացող
- Խաղի մեջ է, եթե ոտքով հարվածից հետո այն տեսանելիորեն շարժվում է, բացառությամբ սեփական տուգանային հրապարակում, պաշտպանվող թիմի օգտին նշանակված տուգանային / ազատ հարվածների: Այդ դեպքում գնդակը խաղի մեջ է մտնում, եթե ոտքով հարվածից հետո այն ուղղակիորեն դուրս է գալիս տուգանային հրապարակից

Մինչ գնդակը կմտնի խաղի մեջ, բոլոր նրանք պետք է գտնվեն.

- գնդակից նվազագույնը 9.15 մ (10 յարդ) հեռավորության վրա, բացառությամբ, եթե նրանք գտնվում են սեփական դարպասայումների միջև՝ դարպասային գծի վրա
- տուգանային հրապարակից դուրս, նրանքի տուգանային հրապարակում նշանակված տուգանային / ազատ հարվածների դեպքում

Տուգանային/ազատ հարվածը կարող է կատարվել՝ գնդակը վեր բարձրացնելով մեկ կամ միաժամանակ երկու ոտքով:

Մրցակցին ապակողմնորոշելու նպատակով, հնարքով կատարված տուգանային/ազատ հարվածը թույլատրվում է, որպես ֆուտբոլի մաս:

Եթե խաղացողը, ճիշտ կատարելով տուգանային/ազատ հարվածը, գնդակին կրկին տիրելու նպատակով, այն միտումնավոր հարվածում է նրցակցին, բայց ոչ անգործորեն, ոչ անգիտակցորեն և ոչ էլ օգտագործելով չափազանց մեծ ուժ, ապա նրցավարը պետք է թույլատրի խաղը շարունակել:

### **3. Խախտումներ և պատժամիջոցներ**

Եթե, կատարվում է տուգանային/ազատ հարված, իսկ մրցակիցը սահմանված հեռավորությունից մոտ է գնդակին, ապա հարվածը պետք է կրկնվի, բացառությամբ, եթե կարելի է կիրառել առավելություն տալու սկզբունքը: Սակայն, եթե խաղացողը արագ կատարում է տուգանային/ազատ հարվածը, իսկ գնդակին տիրում է մրցակիցը, որը դեռ 9.15մ (10 յարդ)-ից մոտ է գնդակին, ապա մրցավարը թույլատրում է շարունակել խաղը: Այնուամենայնիվ, եթե մրցակիցը միտումնավոր թույլ չի տալիս կատարել տուգանային / ազատ հարվածը, ապա նա պետք է զգուշացվի՝ խաղի վերսկսումը ձգձգելու համար:

Եթե պաշտպանվող թիմը սեփական տուգանային հրապարակից արագ կատարում է տուգանային/ազատ հարված, իսկ մեկ կամ մի քանի մրցակիցներ դեռ տուգանային հրապարակում են, որովհետև այնտեղից դուս գալու ժամանակ չեն ունեցել, ապա մրցավարը պետք է թույլատրի խաղը շարունակել: Եթե մրցակիցը, ով տուգանային/ազատ հարվածի կատարման պահին գտնվում է տուգանային հրապարակում, կամ մինչ գնդակի խաղի մեջ լինելու մտնում է տուգանային հրապարակ, ոիաչում է գնդակին կամ պայթարում է գնդակի համար մինչ մեկ այլ խաղացող կողմանի դրան, ապա տուգանային/ազատ հարվածը պետք է կրկնվի:

Եթե պաշտպանվող թիմը սեփական տուգանային հրապարակից կատարում է տուգանային/ազատ հարված և գնդակն ուղղակիորեն դուրս չի գալիս այնտեղից, ապա հարվածը պետք է կրկնվի:

Եթե հարվածողը, գնդակը խաղի մեջ մտցնելուց հետո, մինչ այն կրիպչի մեկ այլ խաղացողի, կրկին դիպչում է գնդակին, ապա նշանակվում է ազատ հարված: Եթե հարվածողը միտումնավոր ձեռքով գնդակ է խաղում, ապա

- Նշանակվում է տուգանային հարված
- Նշանակվում է 11 մետրանոց հարված, եթե խախտումը կատարվում է հարվածողի տուգանային հրապարակում, բացառությամբ, եթե հարվածողը դարպասապահն է, որի դեպքում նշանակվում է ազատ հարված

ԿԱՆՈՆ 14

# 11 ՄԵՏՐԱՆՈՑ ՀԱՐՎԱԾ

11 մետրանոց հարված նշանակվում է, եթե խաղացողը կատարում է տուգանային հարվածով պատժվող խախտում իրենց տուգանային հրապարակում կամ, որպես խաղի մաս՝ խաղաղաշտից դուրս, ինչպես նշված է Կանոն12-ում և 13-ում:

11 մետրանոց հարվածից կարող է ուղղակիորեն գոլ խփել:

## 1. Ընթացակարգ

Գնդակը պետք է անշարժ տեղադրված լինի 11 մետրանոց նշակետի վրա:

Հարվածողը պետք է հստակորեն առանձնացվի:

Պաշտպանվող դարպասապահը պետք է գտնվի դարպասայուների միջև, դարպասային գծի վրա, դեմքով դեպի հարվածողը՝ մինչև գնդակին ոտքով հարվածելը:

Հարվածողից և դարպասապահից բացի, մնացած խաղացողները պետք է գտնվեն.

- 11 մետրանոց նշակետից նվազագույնը 9.15 մ (10 յարդ) հեռավորության վրա
- 11 մետրանոց նշակետից հետո
- խաղաղաշտում
- տուգանային հրապարակից դուրս

Եթե խաղացողները գրավում են իրենց դիրքերը՝ այս կանոնի համաձայն, մրցավարը պետք է 11 մետրանոց հարվածը կատարելու ազդանշան տա:

11 մետրանոց հարված կատարողը պետք է գնդակը ոտքով հարվածի առաջ: Կրունկով հարված կատարել թույլատրվում է, պայմանով, որ գնդակը շարժվի առաջ:

Գնդակը խաղի մեջ է, եթե ոտքով հարվածից հետո այն տեսանելիորեն շարժվում է:

Հարվածողը չպետք է կրկին դիպչի գնդակին, մինչ այն կդիպչի այլ խաղացողի:

11 մետրանոց հարվածն ավարտվում է, եթե գնդակը դադարում է շարժվել, դուրս է գալիս խաղից կամ մրցավարը կանոնների որևէ խախտման համար կանգնեցնում է խաղը:

Խաղի յուրաքանչյուր խաղակեսի կամ լրացուցիչ ժամանակի ավարտին, թույլատրվում է ժամանակ ավելացվել 11 մետրանոց հարվածը կատարելու և ավարտելու համար: Եթե ավելացվում է ժամանակ, ապա 11 մետրանոց հարվածը ավարտվում է, երբ հարվածի կատարումից հետո գնդակը դադարում է շարժվել, դուրս է գալիս խաղից, խաղազմում է ցանկացած խաղացողի կողմից (ներառյալ հարվածողը), բացառությամբ պաշտպանվող թիմի դարպասապահի, կամ մրցավարը կանգնեցնում է խաղող հարվածողի կամ նրա թիմի կողմից կատարված խախտման համար: Եթե պաշտպանվող թիմի խաղացողը (ներառյալ դարպասապահը) խախտում է կատարում և 11 մետրանոց հարվածը շեղ էր/հետ էր մովե, ապա 11 մետրանոցը պետք է կրկնվի:

## 2. Խախտումներ և պատժամիջոցներ

**Եթե մրցավարը 11 մետրանոց հարվածը կատարելու ազդանշան է տալիս, ապա այն պետք է կատարվի: Եթե մինչ գնդակը կմտնի խաղի մեջ, կատարվի հետևյալ իրադրություններից որևէ մեկը.**

- 11 մետրանոց հարված կատարողը կամ նրա թիմակիցը խախտում է կատարում, ապա:
  - Եթե գնդակը գոլ է մտնում, ապա հարվածը կրկնվում է
  - Եթե գնդակը գոլ չի մտնում, ապա մրցավարը կանգնեցնում է խաղը և այն վերսկսում՝ ազատ հարվածով
- Բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են հետևյալ խախտումները, որոնց դեպքում անկախ այն բանից գոլ է խփվում թե ոչ՝ խաղը պետք է կանգնեցվի և վերսկսվի ազատ հարվածով.
  - 11 մետրանոց հարվածը դեպի հետ է կատարվում
  - հարվածը կատարում է 11 մետրանոց հարվածը կատարելու համար առանձնացված խաղացողի թիմակիցը: Այս դեպքում մրցավարը պետք է գգուշացնի հարվածը կատարողին
  - հարվածողը թափավագքը ավարտելուց հետո խաբք է կիրառում և հարվածում գնդակին (թույլատրվում է թափավագքի ընթացքում խաբք կիրառել): Այս դեպքում մրցավարը պետք է գգուշացնի հարվածողին
- Դարպասապահը կամ նրա թիմակիցը խախտում է կատարում.
  - Եթե գնդակը գոլ է մտնում, ապա գոլն արձանագրվում է
  - Եթե գնդակը գոլ չի մտնում, ապա հարվածը կրկնվում է: Եթե խախտումը կատարել է դարպասապահը, ապա նա պետք է գգուշացվի

- Երկու թիմերի խաղացողները խախտում են «Խաղի Կանոնները», ապա հարվածը պետք է կրկնվի, բացառությամբ, երբ խաղացողը կատարել է ավելի լուրջ խախտում (օրինակ՝ անօրինական խաքք): **Եթե և դարպասապահը, և հարվածողը միաժամանակ խախտում են կատարել, և**
  - Եթե հարվածը շետ էր կամ հետ է մղվել, ապա հարվածը պետք է կրկնվի և Երկու խաղացողներն էլ պետք է զգուշացվեն**
  - Եթե գոյ է խիվել, ապա գոյը չպետք է արձանագրվի, հարվածողը պետք է զգուշացվի և խաղը պետք է վերսկսվի ազատ հարվածով՝ պաշտպանվող թիմի օգտին**

#### **Եթե 11 մետրանոց հարվածը կատարելուց հետո.**

- հարվածողը կրկին դիմում է գնդակին, մինչ այն կդիմքի այլ խաղացողի, ապա.
  - նշանակվում է ազատ հարված (կամ տուգանային հարված՝ միտումնավոր ձեռքով խաղի համար)
- գնդակն առաջ շարժվելուց հետո դիմում է օտար մարմնի, ապա.
  - հարվածը կրկնվում է, **բացառությամբ, Եթե միջամտությունը չի խանգարում դարպասապահին կամ պաշտպանվող խաղացողին խաղալու գնդակ, որն ընթանում էր դեպի դարպասը և գոյ է մտնում, ապա տվյալ դեպքում գոյն արձանագրվում է (նույնիսկ Եթե գնդակի հետ հպում է եղել), բացառությամբ, Եթե գնդակը մտնում է մոցակցի դարպասը**
  - գնդակն անդրադարձվում է խաղադաշտ դարպասապահից, դարպասասյուներից կամ հեծանից, այնուհետև դիմում է օտար մարմնի, ապա.
    - մոցավարը պետք է կանգնեցնի խաղը
    - խաղը պետք է վերսկսվի «Վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ գնդակը դիմքել է օտար մարմնի

### 3. Ամփոփիչ աղյուսակ

	11 մետրանոց հարված	
	Գոլ է	Գոլ չէ
Խախտում հարձակվողի կողմից	Հարվածը պետք է կրկնվի	Ազատ հարված
Խախտում պաշտպանի կողմից	Գոլ	Հարվածը պետք է կրկնվի
Խախտում դարպասապահի կողմից	Գոլ	Հարվածը պետք է կրկնվի և դարպասապահը պետք է գգուշացվի
Գնդակը հետ է խփել	Ազատ հարված	Ազատ հարված
Անօրինական խարքի կիրառում	Ազատ հարված և հարվածողը պետք է գգուշացվի	Ազատ հարված և հարվածողը պետք է գգուշացվի
Սխալ հարվածող	Ազատ հարված և հարվածողը պետք է գգուշացվի	Ազատ հարված և հարվածողը պետք է գգուշացվի
Դարպասապահի և հարվածողի կողմից կատարված միաժամանակ խախտում	Ազատ հարված և հարվածողը պետք է գգուշացվի	Հարվածը պետք է կրկնվի, և հարվածողը, և դարպասապահը պետք է գգուշացվեն

ԿԱՆՈՆ 15

# ԿՈՂԱԳԾԻՑ ՆԵՏՈՒՄ

Կողագծից նետման իրավունք է տրվում այն խաղացողի մրցակիցներին, ում գնդակը վերջինը դիպելով ամբողջությամբ հատում է կողային գիծը՝ գետնի վրայով կամ օդով:

Ուղղակիորեն կողագծից նետումով գոլ չի կարող խփվել.

- Եթե գնդակը մտնում է մրցակցի դարպասը, ապա նշանակվում է հարված դարպասից
- Եթե գնդակը մտնում է նետում կատարողի դարպասը, ապա նշանակվում է անկյունային հարված

## 1. Ընթացակարգ

Գնդակը նետելու պահին նետողը պետք է:

- դեմքով լինի դեպի խաղադաշտը
- յուրաքանչյուր ոտնաթաթի մի մասով կանգնած լինի կամ կողագծի կամ գետնի վրա՝ կողագծից դուրս
- երկու ձեռքով նետի գնդակը՝ գլխի հետևից - գլխի վրայով, այնտեղից, որտեղից գնդակը դուրս էր եկել խաղադաշտից

Բոլոր մրցակիցները պետք է գտնվեն նետման տեղից նվազագույնը 2 մետր (2 յարդ) հեռավորության վրա:

Գնդակը խաղի մեջ է, եթե այն մտնում է խաղադաշտ: Եթե գնդակը, մինչև խաղադաշտ մտնելը դիպչում է գետնին, ապա կողագծից նետումը պետք է կրկնվի նույն տեղից և նույն թիմի կողմից: Եթե կողագծից նետումը ճիշտ չի կատարվել, ապա այն պետք է կրկնվի մրցակցի կողմից:

Եթե խաղացողը, ճիշտ կատարելով կողագծից նետումը, միտումնավոր նետում է գնդակը մրցակցի վրա, կրկին գնդակին տիրելու նպատակով, բայց ոչ անգուշորեն, ոչ անգիտակցորեն և ոչ էլ օգտագործելով չափազանց մեծ ուժ, ապա մրցավարը պետք է թույլատրի շարունակել խաղը:

Նետողը չպետք է կրկին դիպչի գնդակին, մինչ այն կդիպչի այլ խաղացողի:

## **2. Ընթացակարգեր և խախտումներ**

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո, նետողը կրկին դիմում է գնդակին մինչ այն կողաքչի այլ խաղացողի, ապա պետք է նշանակվի ազատ հարված: Եթե նետողը միտումնավոր ձեռքով գնդակ է խաղում, ապա.

- պետք է նշանակվի տուգանային հարված
- պետք է նշանակվի 11 մետրանոց հարված, եթե խախտումը կատարվում է նետողի տուգանային հրապարակում, բացառությամբ, եթե ձեռքով գնդակ է խաղացել պաշտպանվող թիմի դարպասապահը, որի դեպքում պետք է նշանակվի ազատ հարված

Մրցակիցը, ով անազմիվ կերպով ապակողմնորոշում կամ խանգարում է նետողին (ներառյալ, երր 2 մ – ից (2 յարդ) ավելի է մոտենում նետման տեղին) պետք է զգուշացվի ոչ սպորտային վարքագիծ դրսնորելու համար: Եթե կողագծից նետումն արդեն կատարվել էր, ապա պետք է նշանակվի ազատ հարված:

Այս Կանոնի ցանկացած այլ խախտման դեպքում կողագծից նետումը պետք է կատարի մրցակից թիմը:

ԿԱՆՈՆ 16

# ՀԱՐՎԱԾ ԴԱՐՊԱՍԻՑ

Հարված դարպասից նշանակվում է, երբ գնդակն առանց գոլ մտնելու, վերջինը դիպչելով հարձակվող թիմի խաղացողին, ամբողջությամբ հատում է դարպասային գիծը գետնի վրայով կամ օդով:

Դարպասից հարվածով ուղղակիորեն կարելի է գոլ խփել, բայց միայն մրցակցի դարպասը: Եթե դարպասից հարվածով գնդակը դուրս գալով տուգանային հրապարակից՝ անմիջապես մտնում է հարվածողի դարպասը, ապա մրցակցի օգտին պետք է նշանակվի անկյունային հարված:

## 1. Ընթացակարգ

- Պաշտպանվող թիմի խաղացողը, դարպասային հրապարակի ցանկացած կետից պետք է անշարժ տեղադրված գնդակին հարվածի ոտքով
- Գնդակը խաղի մեջ է մտնում, երբ դուրս է գալիս տուգանային հրապարակից
- Մրցակիցները պետք է գտնվեն տուգանային հրապարակից դուրս՝ մինչ գնդակը կմտնի խաղի մեջ

## 2. Խախտումներ և պատժամիջոցներ

Եթե հարվածից հետո գնդակն դուրս չի գալիս տուգանային հրապարակից կամ մինչև դուրս գալը դիպչում է որևէ խաղացողի, ապա հարվածը կրկնվում է:

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո հարվածողը կրկին դիպչում է գնդակին՝ մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա պետք է նշանակվի ազատ հարված: Եթե հարվածողը միտումնավոր ձեռքով գնդակ է խաղում, ապա

- պետք է նշանակվի տուգանային հարված
- պետք է նշանակվի 11 մետրանոց հարված, եթե խախտումը կատարվում է հարվածողի տուգանային հրապարակում, բացառությամբ, եթե հարվածողը դարպասապահն է, որի դեպքում պետք է նշանակվի ազատ հարված

Եթե մրցակիցը, ով դարպասից հարվածը կատարելու պահին գտնվում էր տուգանային հրապարակում, կամ մինչ գնդակի խաղի մեջ լինելու մտնում է տուգանային հրապարակ, դիպչում է գնդակին կամ պայքարում է գնդակի համար՝ մինչ այլ խաղացող կդիպչեր դրան, ապա դարպասից հարվածը պետք է կրկնվի:

Եթե խաղացողը մտնում է տուգանային հրապարակ մինչ գնդակի խաղի մեջ մտնելը և խախտում է կատարում կամ մրցակիցն է նրա նկատմամբ խախտում կատարում, ապա դարպասից հարվածը պետք է կրկնվի, իսկ խախտում կատարողը, խախտման բնույթից կախված, կարող է զգուշացվել կամ հեռացվել:

Այս Կանոնի ցանկացած այլ խախտման դեպքում հարվածը պետք է կրկնվի:

ԿԱՆՈՆ 17

# ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ ՀԱՐՎԱԾ

Անկյունային հարված նշանակվում է, երբ գնդակն առանց գոլ մտնելու վերջինը դիպչելով պաշտպանվող թիմի խաղացողին, ամբողջությամբ հատում է դարպասային գիծը գետնի վրայով կամ օդով:

Անկյունային հարվածով ուղղակիորեն կարելի է գոլ խփել, բայց միայն մրցակցի դարպասը: Եթե անկյունային հարվածով գնդակն անմիջապես մտնում է հարվածողի դարպասը, ապա մրցակցի օգտին պետք է նշանակվի անկյունային հարված:

## 1. Ընթացակարգ

- Գնդակը պետք է տեղադրվի այն անկյունային սեկտորի ներսում, որն ամենամոտն է գնդակի դարպասային գիծը հատելու կետին
- Հարձակվող թիմի խաղացողը պետք է ոտքով հարվածի անշարժ տեղադրված գնդակին
- Գնդակը խաղի մեջ է, երբ դրան հարվածում են ոտքով և այն տեսանելիորեն շարժվում է: Պարտադիր չէ, որ այն դուրս գա անկյունային սեկտորից
- Անկյունային դրոշակը չպետք է տեղաշարժվի
- Մրցակիցները պետք է գտնվեն անկյունային սեկտորից նվազագույնը 9.15 մ (10 յարդ) հեռավորության վրա՝ մինչ գնդակը կմտնի խաղի մեջ

## 2. Խախտումներ և պատժամիջոցներ

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո հարվածողը կրկին դիպչում է գնդակին՝ մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա պետք է նշանակվի ազատ հարված: Եթե հարվածողը միտումնավոր ձեռքով գնդակ է խաղում, ապա.

- պետք է նշանակվի տուգանային հարված
- պետք է նշանակվի 11 մետրանոց հարված, եթե խախտումը կատարվում է հարվածողի տուգանային հրապարակում, բացառությամբ, եթե հարվածողը դարպասապահն է, որի դեպքում պետք է նշանակվի ազատ հարված

Եթե խաղացողը, ճիշտ կատարելով անկյունային հարվածը, միտումնավոր հարվածում է գնդակը մրցակցի վրա, կրկին գնդակին տիրելու նպատակով, բայց ոչ անզգուշորեն, ոչ անգիտակցորեն և ոչ էլ օգտագործելով չափազանց մեծ ուժ, ապա մրցավարը պետք է թույլատրի խաղը շարունակել:

Այս կանոնի ցանկացած այլ խախտնան դեպքում հարվածը պետք է կրկնվի:

# Պրակտիկ ուղեցույցներ խաղի պաշտոնյաների համար

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս ուղեցույցները պարունակում են պրակտիկ խորհուրդներ խաղի պաշտոնյաների համար՝ ի լրումն Խաղի Կանոններում եղած տեղեկատվության:

Կանոն 5-ում նշված է, որ մրցավարները պետք է գործեն Խաղի Կանոնների և խաղի ոգու համաձայն: Ակնկալվում է, որ մրցավարները Խաղի Կանոնները կիրառելիս կառաջնորդվեն առողջ բանականությամբ և խաղի ոգով, հատկապես, երբ կայացնում են որոշումներ խաղն անցկացնելու և/կամ շարունակելու վերաբերյալ:

Սա հատկապես ճիշտ է ցածր լիգաների խաղերում, որտեղ ոչ միշտ է հնարավոր խստորեն կիրառել Կանոնները: Օրինակ՝ բացառությամբ ապահովության նկատառումներից, մրցավարը պետք է քույլատրի խաղը սկսել/ շարունակել, եթե՝

- բացակայում են մեկ կամ ավելի անկյունային դրոշակներ
- խաղադաշտի գծանշումներում կա չնշին անծշտություն, ինչպիսին է անկյունային հրապարակը, կենտրոնական շրջանագիծը և այլն
- դարպասայունները/հեծանը սպիտակ չեն

Այսպիսի դեպքերում մրցավարը՝ թիմերի համաձայնությամբ, պետք է սկսի/ շարունակի խաղը և գեկուցագիր ներկայացնի համապատասխան նարմիններին:

Նշում.

- ՄՕ - մրցավարի օգնական
- ՄԼՕ - մրցավարի լրացուցիչ օգնական

# Դիրքեր, շարժում և թիմային աշխատանք


## 1. Հիմնական դիրքեր և շարժում

Լավագույն դիրքն այն է, որտեղից մրցավարը կարող է կայացնել ճիշտ որոշում: Դիրքերի մասին բոլոր խորհուրդները պետք է կիրառվեն՝ հաշվի առնելով մրցող թիմերի, խաղացողների մասին հատուկ տեղեկությունները և խաղի ընթացքում տեղի ունեցած հրադարձությունները:

Գծանկարներում խորհուրդ տրվող դիրքերը՝ հիմնական ուղեցույցներն են: «Տարածք» հասկացությունը ընդգծում է, որ խորհուրդ տրվող դիրքը դա տարածություն է, որտեղ մրցավարը հավանաբար կգործի ավելի արդյունավետ: Կախված խաղի կոնկրետ հանգանակներից՝ տարածքը կարող է լինել մեծ, փոքր կամ ունենա այլ ձև:

### Խորհուրդներ.


- Խաղը պետք է ընթանա մրցավարի և համապատասխան ՄՕ-ի միջև
- Համապատասխան ՄՕ-ն պետք է լինի մրցավարի տեսադաշտում, հետևաբար մրցավարը ստվորաբար պետք է օգտագործի լայն անկյունագծային մեթոդիկան
- Տեղընտրումը խաղային իրադրությունից դուրս, մրցավարի համար հեշտացնում է խաղը և համապատասխան ՄՕ-ին պահել իր տեսադաշտում
- Խաղին հետևելու համար, մրցավարը պետք է լինի հնարավորինս մոտ՝ չխանգարելով խաղին
- «Ինչ է անհրաժեշտ տեսմել»՝ դա ոչ միշտ է այն, ինչ կատարվում է գնդակի մոտակայքում: Մրցավարը պետք է նաև ուշադրություն դարձնի:
  - գնդակին չտիրող խաղացողների միջև կոնֆրոնտացիաներին
  - հնարավոր խախտումներին այն տարածքում, դեպի ուր կընթանա խաղը
  - գնդակ խաղալուց հետո կատարվող խախտումներին



## Մրցավարի օգնականի և մրցավարի լրացուցիչ օգնականի դիրքեր

ՄՕ-ն պետք է գտնվի նախավերջին պաշտպանի հետ նույն գծի վրա, կամ գնդակի հետ, եթե այն ավելի մոտ է դարպասային գծին, քան նախավերջին պաշտպանը: ՄՕ-ն պետք է միշտ դեմքով դեպի խաղաղաշտը լինի, անգամ, եթե վազում է: Կարծ տարածությունների համար պետք է օգտագործվի կից քայլերով շարժումը: Սա հատկապես կարևոր է «խաղից դուրս»-ը որոշելիս, քանի որ ՄՕ-ին տալիս է ավելի լավ տեսադաշտ:

ՄԼՕ-ն պետք է դիրքավորվի դարպասային գծի հետևում, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է շարժվել դեպի դարպասային գիծը գոլ ե/ գոլ չէ իրադրություննում որոշում կայացնելու համար: ՄԼՕ-ին չի թույլատրվում մտնել խաղաղաշտ, բացառությամբ արտակարգ իրավիճակների:




## 2. Դիրքեր և թիմային աշխատանք

### Խորհրդատվություն

Կարգապահական որոշումներ կայացնելիս, տեսողական կապը և մրցավարին ՄՕ-ի ձեռքի քողարկված ազդանշանը կարող է բավարար լինել: Եթե անհրաժեշտ է անմիջական խորհրդատվություն, ապա ՄՕ-ն կարող է 2-3 մետր նտնել խաղադաշտ: Խոսելու ժամանակ և մրցավարը և ՄՕ-ն պետք է դեմքով լինեն դեպի խաղադաշտը, որպեսզի նրանց չլսեն մնացածները, իսկ իրենք հսկեն խաղացողներին և խաղադաշտը:



### Անկյունային հարված



Անկյունային հարվածի ժամանակ ՄՕ-ի դիրքը պետք է լինի անկյունային որոշի հետևում՝ դարպասային գծի ուղղությամբ, բայց նա չպետք է խանգարի անկյունային հարված կատարողին և պետք է հսկի, որ գնդակը ճիշտ տեղադրված լինի անկյունային հրապարակում:



## Տուգանային / ազատ հարված

Տուգանային / ազատ հարվածների ժամանակ ՄՕ-ի դիրքը պետք է լինի նախավերջին պաշտպանի հետ նույն գծի վրա՝ «խաղից դուրս»-ը հսկելու համար: Անեն դեպքում ՄՕ-ն պետք է պատրաստ լինի հետևել գնդակին՝ վազելով դեպի անկյունային դրոշը, եթե կատարվում է ուղիղ հարված դեպի դարպասը:






## Գոլ է / գոլ չէ

Եթե գոլ է խփվել և որոշման հետ կապված կասկած չկա, ապա մրցավարը և մրցավարի օգնականը պետք է հաստատեն տեսողական կապ: Յետո մրցավարի օգնականը, առանց դրոշը բարձրացնելու պետք է 25-30 մետր արագ վազի դեպի միջնագիծ:

Եթե գոլ է խփվել, բայց դեռ թվում է, թե գնդակը խաղի մեջ է, ապա մրցավարի օգնականը պետք է առաջին հերթին բարձրացնի դրոշը՝ մրցավարի ուշադրությունը գրավելու համար, հետո շարունակի դարպասի գրավումը հաստատող նորմալ ընթացակարգը՝ արագ վազելով 25-30 մետր դեպի միջնագիծ:


Այն դեպքերում, եթե գնդակը ամբողջությամբ չի հատել դարպասային գիծը և խաղը բնականոն շարունակվում է, քանի որ գոլ չի խփվել, մրցավարը պետք է տեսողական կապ հաստատի մրցավարի օգնականի հետ և, անհրաժեշտության դեպքում, ձեռքով քողարկված ազդանշան տա:



## Հարված դարպասից


Առաջին հերթին ՍՕ-ը պետք է ստուգի, արդյո՞ք գնդակը դարպասային հրապարակում է: Եթե գնդակը ճիշտ չի տեղադրված, ապա ՍՕ-ն չպետք է շարժվի իր դիրքից, տեսողական կապ հաստատի մրցավարի հետ և բարձրացնի դրոշը: Եթե գնդակը ճիշտ է տեղադրված դարպասային հրապարակում, ապա ՍՕ-ն պետք է շարժվի դեպի տուգանային հրապարակի գիծը, որպեսզի հանողվի, որ գնդակը դուրս է եկել տուգանային հրապարակից (գնդակը խաղի մեջ է), և, որ հարձակվողները տուգանային հրապարակից դուրս են: Դրանից հետո ՍՕ-ն պետք է դիրք գրավի՝ «խաղից դուրս»-ը հսկելու համար:

Ամեն դեպքում, եթե կա ՍԼՕ, ապա ՍՕ-ն սկզբում պետք է դիրք գրավի տուգանային հրապարակի գիծի ուղղությամբ, իսկ հետո նախավերջին պաշտպանի գծի ուղղությամբ: ՍԼՕ-ն պետք է դիրք գրավի դարպասային գծի և դարպասային հրապարակի հատման կետում և հսկի, որ գնդակը տեղադրված լինի դարպասային հրապարակում: Եթե գնդակը ճիշտ չի տեղադրված, ապա ՍԼՕ-ն պետք է հաղորդի այդ մասին մրցավարին:




## Դարպասապահը ազատվում է գնդակից

ՄՕ-ն պետք է դիրք գրավի տուգանային հրապարակի գծի ուղղությամբ և հսկի, որ դարպասապահը, տուգանային հրապարակից դուրս ձեռքբերում չպահի գնդակը: Եթե որ դարպասապահն ազատվում է գնդակից, ՄՕ-ն պետք է դիրք գրավի՝ «խաղից դուրս»-ը հսկելու համար:




## Սկզբնահարված

Սկզբնահարվածի ժամանակ ՄՕ-ները պետք է գտնվեն նախավերջին պաշտպանի հետ նույն գծի վրա:




## 11 մետրանոց հարվածաշար

ՄՕ-ներից մեկը պետք է դիրք գրավի դարպասային գծի և դարպասային հրապարակի գծի հատման կետում: Մյուս ՄՕ-ն պետք է գտնվի կենտրոնական շրջանագծի ներսում, որպեսզի հակի խաղացողներին: Եթե կան ՄԼՕ-ներ, ապա նրանք պետք է դիրք գրավեն համապատասխանաբար դարպասի աջ և ձախ կողմերում՝ դարպասային գծի և դարպասային հրապարակի գծերի հատման կետերում: Բազառություն են այն դեպքերը, եղած օգտագործվում է ԴԳՏ: Այս դեպքերում միայն մեկ ՄԼՕ է անհրաժեշտ: 2-րդ ՄՕ-ն և 1-ին ՄՕ-ն պետք է հսկեն կենտրոնական շրջանագծի ներսում գտնվող խաղացողներին, իսկ 2-րդ ՄՕ-ն և 4-րդ պաշտոնյան պետք է հսկեն տեխնիկական գոտիներով:




## 11 մետրանոց հարված

ՍՕ-ն պետք է դիրք գրավի դարպասային գծի և տուգանային հրապարակի գծի հատման կետում:



Եթե կան ՄԼՕ-ներ, ապա ՄԼՕ-ն պետք է դիրք գրավի դարպասային գծի  
և դարպասային հրապարակի գծերի հատման կետում, իսկ ՍՕ-ը պետք է դիրք գրավի 11մ-ոց  
նշակետի ուղղությամբ (որը «խաղից դուրս»-ի գիծն է):



## **Մասսայական կոնֆրոնտացիա**

Մասսայական կոնֆրոնտացիայի դեպքերում, ամենամոտ ՄՕ-ն կարող է մտնել խաղաղաշտ՝ մրցավարին աջակցելու համար: Մյուս ՄՕ-ն պետք է հետևի և գրանցի միջադեպի մանրամասները: Չորրորդ պաշտոնյան պետք է մնա տեխնիկական գոտիների մերձակայքում:

## **Պահանջվող տարածություն**

Եթե ՄՕ-ին շատ մոտ նշանակվել է տուգանային/ազատ հարված, ապա ՄՕ-ն կարող է մտնել խաղաղաշտ (սովորաբար մրցավարի ցուցումով), որպեսզի օգնի ապահովել, որ խաղացողները դիրք գրավեն գնդակից 9.15մ հեռավորության վրա: Այս դեպքում մրցավարը, մինչ խաղը վերսկսելը, պետք է սպասի, մինչև ՄՕ-ն վերադառնա իր դիրքին:

## **Փոխարինում**

Եթե չկա չորրորդ պաշտոնյա, ապա ՄՕ-ն պետք շարժվի դեպի միջնագիծ փոխարինման ընթացակարգի ժամանակ մրցավարին աջակցելու համար: Այս դեպքում մրցավարը, մինչ խաղը վերսկսելը, պետք է սպասի, մինչև ՄՕ-ը վերադառնա իր դիրքին:

Եթե կա չորրորդ պաշտոնյա, ապա ՄՕ-ին պետք չէ շարժվել դեպի միջնագիծ, քանի որ չորրորդ պաշտոնյան է ապահովում փոխարինման ընթացակարգը, բացառությամբ, եթե միաժամանակ կատարվում է մի քանի փոխարինումներ: Այս դեպքում ՄՕ-ն պետք շարժվի դեպի միջնագիծ չորրորդ պաշտոնյահն աջակցելու համար:

# ԺԵՍՄԵՐԻ ԼԵզու, հաղորդակցություն և սուլիչի օգտագործում

## 1. Մրցավարներ

### ԺԵՍՄԵՐԻ ԼԵզու

ԺԵՍՄԵՐԻ ԼԵզուն՝ միջոց է, որը մրցավարը օգտագործում է, որպեսզի՝

- վերահսկի խաղը
- ցույց տա ինքնատիրապետում և հեղինակություն

ԺԵՍՄԵՐԻ ԼԵզուն՝ կայացրած որոշուման բացատրություն չէ:

### Ազդանշաններ

Տես Կանոն 5-ում՝ ազդանշանների վերաբերյալ դիագրամները:

### Սուլիչ

Սուլիչ պետք է կիրառել.

- Խաղը սկսելու (խաղի և լրացուցիչ ժամանակի 1-ին ու 2-րդ խաղակեսեր) և գոլից հետո խաղը վերսկսելու համար
- Խաղը կանգնեցնելու համար՝
  - տուգանային / ազատ կամ 11 մետրանոց հարվածներ նշանակելիս
  - Եթե խաղը ժամանակավորապես կամ ընդհանրապես դադարեցվում է
  - յուրաքանչյուր խաղակեսի վերջում
- Խաղը վերսկսելու համար.
  - տուգանային / ազատ հարվածով, եթե պահանջվում է պահպանել սահմանված հեռավորություն
  - 11 մետրանոց հարվածով
- Խաղը վերսկսելու համար, եթե այն կանգնեցվել է.
  - դեղին կամ կարմիր քարտ ցույց տալու համար
  - վնասվածքի համար
  - փոխարինում կատարելու համար

Սուլիչ կիրառել պետք Չէ.

- Խաղը կանգնեցնելու համար՝ ակնհայտ.
  - հարված դարպասից, անկյունային հարված կամ կողագծից նետում նշանակելու կամ դարպասի գրավում արձանագրելու համար
- Խաղը վերսկսելու համար.
  - տուգանային / ազատ հարվածների շատ դեպքերում, դարպասից հարվածի, անկյունային հարվածի, կողագծից նետնան և «վիճաբանական գնդակ»-ի դեպքում

Սուլիչի հաճախակի անտեղի է օգտագործումը, ավելի քիչ ազդեցություն կունենա այն դեպքերում, եթե դա, անհրաժեշտ է:

Եթե մրցավարը ցանկանում է, որ խաղացողը (ները) մինչև խաղը վերսկսելը, սպասի սուլիչ հնչեցնելուն (օրինակ, եթե պետք է ապահովել, որ պաշտպանները գտնվեն խախտման տեղից 9.15 մ հեռավորության վրա), ապա նա պետք է այդ մասին հստակ տեղեկացնի հարձակողներին:

Եթե մրցավարը սխալմամբ սուլիչ է հնչեցրել և խաղը կանգնել է, ապա այն պետք է վերսկսվի «վիճաբանական գնդակ»-ի նետումով:

## 2. Մրցավարի օգնականներ

### Բիա ազդանշան

«Բիա ազդանշան» համակարգը՝ դա հավելյալ ազդանշան է, որը պետք է միայն օգտագործվի՝ մրցավարի ուշադրությունը գրավելու համար:

«Բիա ազդանշան»-ի օգտագործումն օգտակար է, հետևյալ իրադրություններում.

- «խաղից դուրս»
- խախտումներ (մրցավարի տեսադաշտից դուրս)
- կողագծից նետում, անկյունային հարված, հարված դարպասից կամ դարպասի գրավում (դժվար որոշումներ)

### Էլեկտրոնային հաղորդակցման համակարգ

Եթե օգտագործվում է էլեկտրոնային հաղորդակցման համակարգ, ապա մրցավարը պետք է խորհուրդ տա ՍՕ-ներին, եթե օգտագործել հաղորդակցման համակարգը ֆիզիկական ազդանշանի հետ միասին կամ դրա փոխարեն:

### Դրոշով աշխատանքի տեխնիկա

ՍՕ-ների դրոշը միշտ պետք է լինի չփաթաթված և տեսանելի մրցավարին: Սա սովորաբար նշանակում է, որ դրոշը պետք է գտնվի մրցավարին մոտ ձեռքում: Ազդանշան տալիս, ՍՕ-ն պետք է դադարեցնի վազքը, դեմքով լինի դեպի խաղադաշտը, տեսողական կապ հաստատի մրցավարի հետ և մտածված շարժումով բարձրացնի դրոշը (ոչ հապճեա կամ շատ կտրուկ): Դրոշը պայմանականորեն պետք է լինի որպես ձեռքի շարունակություն: ՍՕ-ները դրոշ բարձրացնելիս պետք է օգտագործեն այն ձեռքը, որով պետք է տան հաջորդ ազդանշանը:

Եթե իրավիճակները փոխվում են և պետք է օգտագործվի մյուս ձեռքը, ապա ՄՕ-ն պետք է դրոշը ձեռքից-ձեռք տեղափոխի գոտկատեղից ներքև։ Եթե ՄՕ-ն ազդանշան է տալիս, որ գնդակը դուրս է եկել խաղից, ապա պետք է դա շարունակի, մինչև մրցավարը նկատի այն։

Եթե ՄՕ-ն հեռացման արժանի խախտման ազդանշան է տալիս և մրցավարը անմիջապես չի նկատում։

- Եթե խաղը կանգնեցվել էր, ապա վերսկսումը կարող է փոխվել «Խաղի կանոններ»-ի համաձայն (տուգանային / ազատ հարված, 11 մետրանոց հարված և այլն),
- Եթե խաղն արդեն վերսկսվել է, մրցավարը դեռ կարող է կարգապահական պատժամիջոց կիրառել, բայց խախտման համար չի կարող նշանակել տուգանային/ազատ կամ 11 մետրանոց հարված։

## ԺԵՍՄԵՐ

Որպես հիմնական կանոն, ՄՕ-ն ձեռքերով չպետք է տա ակնհայտ ազդանշաններ։ Այնուամենայնիվ, որոշ դեպքերում, քողարկված ձեռքով ազդանշանը կարող է օգնել մրցավարին։ Զեռքով ազդանշանը պետք է ունենա հստակ իմաստ և այն պետք է հանաձայնեցված լինի մինչխաղային հրահանգավորման ժամանակ։

## Ազդանշաններ

Տես Կամոն 6-ում՝ ազդանշանների վերաբերյալ դիագրամները։

## ԱՆԿԵՊՈՒՆԱՅԻՆ ՀԱՐՎԱԾ / ՀԱՐՎԱԾ ԴԱՐԱՊԱՍԻԾ

Եղը գնդակն ամբողջովին հատում է դարպասային գիծը, ՄՕ-ն պետք է բարձրացնի դրոշակը այ ձեռքով (ավելի լավ տեսադաշտ)՝ մրցավարին տեղյակ պահելու համար, որ գնդակը դուրս է եկել խաղից և, եթե դա.

- մոտ է ՄՕ-ին, ապա նա պետք է ազդանշան տա՝ արդյոք դա դարպասից հարված է, թե անկյունային հարված
- հեռու է ՄՕ-ից, ապա նա պետք է տեսողական կապ հաստատի մրցավարի հետ և հետևի նրա որոշմանը:

Եղը գնդակն ակնհայտորեն հատում է դարպասային գիծը, ապա ՄՕ-ն չպետք է բարձրացնի դրոշը, տեղեկացնելու համար, որ գնդակը դուրս է եկել խաղից։ Եթե դարպասից հարվածի կամ անկյունային հարվածի որոշումն ակնհայտ է, պարտադիր չէ ազդանշան տալ, հատկապես, եղը մրցավարն ազդանշան է տալիս։

## ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ՄՕ-ն պետք է բարձրացնի դրոշը, եթե խախտում կամ ոչ պատշաճ վարքագծի դրսեւորում է կատարվել իր անմիջական մերձակայքում կամ մրցավարի տեսադաշտից դուրս։ Մնացած բոլոր դեպքերում, եթե դա պահանջվի, նա պետք է սպասի և հայտնի իր կարծիքը, ապա տեղեկացնի մրցավարին տեսածի ու լսածի, ինչպես նաև, միջադեպին ներգրավված խաղացողների մասին։

Մինչ խախտման մասին ազդանշան տալը՝ ՄՕ-ն պետք է համոզվի, որ.

- խախտումը դուրս էր մրցավարի տեսադաշտից կամ նա չուներ լավ տեսադաշտ
- մրցավարը չէր կիրառի առավելություն տալու սկզբունքը

Եթե խախտում է կատարվել, որի համար անհրաժեշտ է ՄՕ-ի ազդանշանը, ապա ՄՕ-ն պետք է.

- բարձրացնի իր դրոշը նույն ձեռքով, որով պետք է ավարտի ազդանշանը: Սա մրցավարին կտա ակնհայտ հուշում, թե ում օգտին պետք է նշանակվի տուգանային / ազատ հարված
- տեսողական կապ հաստատի մրցավարի հետ
- թեթևակի շարժի դրոշը հետ-առաջ (զերծ մնալով որևէ հապճեպ կամ կտրուկ շարժումից)

ՄՕ-ն պետք է օգտագործի «սպասել, տեսնել մեթոդ»-ը, որպեսզի թույլ տա խաղը շարունակել և չբարձրացնի դրոշը, եթե թիմը, որի նկատմամբ խախտում է կատարվել, կստանա առավելություն: Այս պատճառով շատ կարևոր է, որ ՄՕ-ն տեսողական կապ հաստատի մրցավարի հետ:

### **Տուգանային հրապարակի սահմաններում կատարված խախտումներ**

Եթե, մրցավարի տեսադաշտից դուրս, տուգանային հրապարակում՝ հատկապես ՄՕ-ի դիրքին մոտ, պաշտպանը խախտում է կատարել, ապա ՄՕ-ն առաջին հերթին պետք է տեսողական կապ հաստատի մրցավարի հետ, որպեսզի տեսնի, թե ինչ դիրքում է մրցավարը և ինչ գործողություն է նա ձեռնարկել: Եթե մրցավարը ոչ մի գործողություն չի ձեռնարկել, ապա ՄՕ-ն պետք է դրոշով ազդանշան տա, օգտագործի «բիպ ազդանշան»-ը, այնուհետև տեսանելիորեն կողագծով շարժվի դեպի անկյունային դրոշակը:

### **Տուգանային հրապարակից դուրս կատարված խախտումներ**

Եթե, տուգանային հրապարակից դուրս (տուգանային հրապարակի սահմանագծի մոտ), պաշտպանը խախտում է կատարել, ապա ՄՕ-ն պետք է տեսողական կապ հաստատի մրցավարի հետ, որպեսզի տեսնի, թե ինչ դիրքում է մրցավարը և ինչ է գործողություն է նա ձեռնարկել և, եթե անհրաժեշտ է դրոշով ազդանշան տա: Յակագրությունը դեպքում ՄՕ-ն պետք է կարողանա տեղեկություն տալ, արդյո՞ք կատարվել է խախտում, թե՝ ոչ, արդյոք խախտումը կատարվել է տուգանային հրապարակի ներսում, թե՝ դրսում և ի՞նչ կարգապահական պատժամիջոց պետք է կիրառվի: ՄՕ-ն պետք է ակնհայտ կողագծով շարժվի դեպի միջնագիծը, որպեսզի ընդգծի, որ խախտումը կատարվել է տուգանային հրապարակից դուրս:

## **Գոլ է - գոլ չէ**

Եթե, ակնհայտ է, որ գնդակն ամբողջովին հատել է դարպասային գիծը, ապա ՄՕ-ն պետք է տեսողական կապ հաստատի մրցավարի հետ՝ չտալով որևէ լրացուցիչ ազդանշան:

Եթե գոլ է խփվել, բայց ակնհայտ չէ, որ գնդակը հատել է դարպասային գիծը, ապա ՄՕ-ն նախ պետք է բարձրացնի դրոշը՝ մրցավարի ուշադրությունը գրավելու համար և հետո հաստատի գոլը:

### **«Խաղից դուրս»**

«Խաղից դուրս»-ի որոշում կայացնելիս ՄՕ-ի առաջին գործողությունը պետք է լինի՝ բարձրացնել դրոշը (աջ ծեռքով, որը ՄՕ-ին տալիս է ավելի լավ տեսադաշտ) և հետո, եթե մրցավարը կանգնեցնում է խաղը, օգտագործի դրոշը, խաղադաշտում ցույց տալու համար այն տարածքը, որտեղ կատարվել է խախտումը: Եթե մրցավարը միանգամից չի նկատում դրոշը, ապա ՄՕ-ն պետք է շարունակի տալ ազդանշանը՝ մինչև մրցավարը նկատի այն կամ, մինչև գնդակն անցնի պաշտպանվող թիմի լիակատար հսկողության տակ:

## **11 մետրանոց հարված**

Եթե մինչ հարվածը, դարպասապահը ակնհայտորեն առաջ է շարժվում դարձասային գծից և գոլ չի խփում, ապա ՄՕ-ն պետք է բարձրացնի դրոշը:

### **Փոխարինում**

Եթե ՄՕ-ն տեղեկացվում է (4-րդ պաշտոնյայի կամ թիմի պաշտոնյայի կողմից), որ պահանջվում է փոխարինում, ապա նա, հաջորդ խաղադադարին, այդ մասին պետք է ազդանշան տա մրցավարին:

### **Կողագծից նետում**

Եթե գնդակն ամբողջովին հատում է կողագիծը.

- ՄՕ-ի մոտ, ապա նա պետք է անմիջապես ազդանշանով ցույց տա կողագծից նետման ուղղությունը
- ՄՕ-ից հեռու և կողագծից նետման որոշումն ակնհայտ է, ապա նա պետք է անմիջապես ազդանշանով ցույց տա կողագծից նետման ուղղությունը
- ՄՕ-ից հեռու և ՄՕ-ն կասկածում է, թե, որ ուղղությունը պետք է ցույց տա, ապա նա պետք է բարձրացնի դրոշը, որպեսզի մրցավարին տեղեկացնի, որ գնդակը դուրս է եկել խաղից, հաստատի տեսողական կապ նրա հետ և հետևի նրա ազդանշանին:

### **3. Մրցավարի լրացուցիչ օգնականներ**

ՍԼՕ-ները մրցավարի հետ համագործակցելիս պետք է օգտագործեն ռադիոհաղորդակցման համակարգ (ոչ դրոշներ): Եթե ռադիոհաղորդակցման համակարգը խափանվում է, ապա ՍԼՕ-ները պետք է օգտագործեն ձեռքի հատուկ էլեկտրոնային «բիա ազդանշանան»-ը: Սովորաբար, ՍԼՕ-ները չպետք է ձեռքով բացահայտ ազդանշաններ տան: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում, քողարկված ձեռքով ազդանշանը կարող է մրցավարին տալ արժեքավոր օգնություն: Զեռքի ազդանշանը պետք է ունենա հստակ իմաստ և պետք է համաձայնեցված լինի մինչխաղաղին հրահանգավորման ժամանակ:

Տեսնելով, որ գնդակը դարպասի միջով, ամբողջովին հատել է դարպասային գիծը, ՍԼՕ-ն պետք է:

- անմիջապես հաղորդակցման համակարգի միջոցով մրցավարին տեղեկացնի, որ գոլ պետք է արձանագրվի
- ձախ ձեռքով, ուղղահայաց դարպասային գծին ակնհայտ ազդանշան տա՝ ցույց տալով խաղաղաշտի կենտրոնը (ձեռքի հատուկ սարքը պետք է լինի ձախ ձեռքում): Այս ազդանշանըն անհրաժեշտ չէ, եթե գնդակն ակնհայտորեն հատում է դարպասային գիծը:

Վերջնական որոշումը պետք է կայացնի մրցավարը:

# Այլ խորհուրդներ

## 1. Առավելություն

Երբ կատարվում է կանոնների խախտում, մրցավարը կարող է կիրառել առավելություն տալու սկզբունքը: Սակայն առավելություն տալու սկզբունքը կիրառելու կամ խաղը կանգնեցնելու որոշում կայացնելիս՝ նա պետք է հաշվի առնի հետևյալ պայմանները.

- Խախտման լրջությունը - եթե խախտումը նախատեսում է հեռացուն, ապա մրցավարը պետք է կանգնեցնի խաղը և հեռացնի խաղացողին, բացառությամբ, երբ կա գոլ խփելու ակնհայտ հնարավորություն
- Խախտման տեղը - ինչքան մոտ է մրցակցի դարպասին, այնքան այն արդյունավետ կարող է լինել
- անմիջապես հեռանկարային գրոհի հնարավորությունը
- խաղի մթնոլորտը

## 2. Կորցրած ժամանակի փոխհատուցում


Խաղի ընթացքում շատ դադարները բնական են (օրինակ՝ կողագծից նետումներ, դարպասից հարվածներ): Ժամանակը փոխհատուցվում է միայն, եթե դադարները չափազանց երկար են:

## 3. Մրցակցին բռնել / պահել


Մրցավարներին հիշեցվում է, արագ միջամտել և ցուցաբերել վճռականություն, երբ մրցակցին բռնում / պահում են, հատկապես տուգանային հրապարակում՝ անկյունային, տուգանային/ազատ հարվածների ժամանակ: Այսպիսի դեպքերում

- մրցավարը պետք է բանավոր զգուշացնի ցանկացած խաղացողի, ով բռնում / պահում է մրցակցին, մինչ գնդակը կմտնի խաղի մեջ
- զգուշացնի խաղացողին, եթե նա շարունակում է մրցակցին բռնել / պահել, մինչ գնդակը կմտնի խաղի մեջ
- նշանակի տուգանային կամ 11 մետրանոց հարված և զգուշացնի խաղացողին, եթե դա կատարվում է, երբ գնդակը խաղի մեջ է


#### 4. Խաղից դուրս



Յարձակվողը (Ա) գտնվում է «խաղից դուրս» դիրքում, չխանգարելով մրցակցին, դիպչում է գնդակին: Մրցավարի օգնականը պետք է բարձրացնի դրոշակը, եթե խաղացողը դիպչում է գնդակին:




Յարձակվողը (Ա) գտնվում է «խաղից դուրս» դիրքում, չի խանգարում մրցակցին և չի դիպչում գնդակին: Խաղացողը չի կարող պատժվել, քանի որ նա չի դիպչում գնդակին:




Խաղից դուրս դիրքում գտնվող հարձակվողը (Ա) վազում է դեպի գնդակը: Դեպի գնդակն է վազում նաև «խաղից դուրս» դիրքում չգտնվող նրա թիմակիցը (Բ) և խաղում է գնդակ: Հարձակվողը (Ա) չի կարող պատժվել, քանի որ չի դիմել գնդակին:



«Խաղից դուրս» դիրքում գտնվող խաղացողը (Ա) կարող է պատժվել մինչ գնդակ խաղալը կամ գնդակին դիմչելը, եթե մրցավարի կարծիքով չկա «խաղից դուրս» դիրքում չգտնվող թիմակից, որը հնարավորություն ունի խաղալ գնդակ:




Խաղից դուրս դիրքում գտնվող հարձակվողը (1) վազում է դեպի գնդակը և չի դիպչում գնդակին: Մրցավարի օգնականը պետք է «հարված դարպասից» կատարելու ազդանշան տա:




Խաղից դուրս դիրքում գտնվող հարձակվողը (Ա) փակում է դարպասապահի (ԴՊ) տեսաղաշտը: Նա պետք է պատժվի, որովհետև խանգարում է մրցակցին խաղալու գնդակ կամ հնարավորություն ստանալու խաղալ գնդակ:




«Խաղից դուրս» դիրքում գտնվող հարձակվողը (Ա) ակնհայտորեն չի փակում դարպասապահի (ՂՊ) տեսադաշտը, կամ չի պայթարում մրցակցի հետ գնդակին տիրելու համար:




«Խաղից դուրս» դիրքում գտնվող հարձակվողը (Ա) վազում է դեպի գնդակը, բայց չի գրկում մրցակցին գնդակ խաղալուց կամ գնդակ խաղալու հնարավորություն ստանալուց:  
Հարձակվողը (Ա) չի պայթարում մրցակցի (Բ) հետ գնդակին տիրելու համար




«Խաղից դուրս» դիրքում գտնվող հարձակվողը (U) վազում է դեպի գնդակը՝ պայքարելով մրցակցի (P) հետ գնդակին տիրելու համար, զրկելով նրան գնդակ խաղալուց կամ գնդակ խաղալու հնարավորություն ստանալուց: Հարձակվողը (U) պայքարում է մրցակցի հետ (P) գնդակին տիրելու համար:




Հարձակվողը (P) պատճվում «Խաղից դուրս» դիրքում գտնվելու համար, եթե նա թիմակցի կողմից գնդակ խաղալու կամ դրան դիպչելու պահին գտնվելով «Խաղից դուրս» դիրքում գնդակ է խաղում կամ դիպչում է գնդակին, որն անդրադարձվել, շեղվել կամ դարպասապահի կողմից միտունավոր հետ է մղվել և հայտնվել է իր մոտ:




Հարձակվողը (Բ) պատժվում «խաղից դուրս» դիրքում գտնվելու համար, երբ նա թիմակցի կողմից գնդակ խաղալու կամ դրան դիպչելու պահին գտնվելով «խաղից դուրս» դիրքում գնդակ է խաղում կամ դիպչում է գնդակին, որն անդրադարձվել, շեղվել կամ մրցակից թիմի խաղացողի (Գ) կողմից միտումնավոր հետ է մղվել և հայտնվել է իր նոտ:



Թիմակցի (Ա) կողմից կատարված հարվածը անդրադարձվում է դարպասապահի կողմից և «խաղից դուրս» դիրքում չգտնվող հարձակվողը (Բ) խաղում է գնդակ: «խաղից դուրս» դիրքում գտնվող հարձակվողը (Գ) չի պատժվում, քանի որ չի խաղում գնդակ և չի ստանում առավելություն գտնվելով այդ դիրքում:



Թիմակցի (Ա) կողմից կատարված հարվածից հետո, գնդակն անդրադարձվում, շեղվում է պաշտպանից և հայտնվում է հարվածի պահին «խաղից դուրս» դիրքում գտնվող հարձակվողի (Բ) մոտ, որը պատժվում է գնդակ խաղալու կամ դրան դիաչելու համար:



Հարձակվողը (Գ) գտնվում է «խաղից դուրս» դիրքում և չի խանգարում մրցակցին, եթե թիմակիցը (Ա) փոխանցում է գնդակը «խաղից դուրս» դիրքում չգտնվող խաղընկերոջը (Բ1), որը վազում է դեպի մրցակցի դարպասը և փոխանցում է գնդակը (Բ1) հարձակվողին (Գ): Հարձակվողը (Գ) չի կարող պատժվել, քանի որ, եթե գնդակը փոխանցվում է նրան, նա արդեն չի գտնվում «խաղից դուրս» դիրքում:

## **5. Բուժօգնություն/ բուժզննում զգուշացումից/հեռացումից հետո**

Նախկինում վնասվածք ստացած խաղացողը, ով բժշկական օգնություն էր ստանում խաղաղաշտում, պետք է դուրս գար խաղաղաշտից՝ մինչև խաղը վերսկսելը: Սա անարդար է, երբ խաղը վերսկսվելուց հետո, խախտում կատարած թիմը թվային առավելություն է ստանում՝ մրցակցի վնասվածք ստանալու պատճառով:

Այնուամենայնիվ այս պահանջը ներկայացվեց, քանի-որ խաղացողները, հաճախ տակտիկական նկատառումներով օգտագործում էին վնասվածքը՝ խաղի վերսկսումը ձգձգելու համար:

Այս երկու անարդար իրավիճակները հավասարակշռելու համար ԻՖԱԲ-ը որոշեց, որ միայն այն դեպքերում, երբ խախտումը կատարվել է ֆիզիկական հպումով, որի համար մրցակիցը զգուշացվել կամ հեռացվել է, վնասվածք ստացած խաղացողը կարող է արագ բուժօգնություն/ բուժզննում ստանալ և հետո մնալ խաղաղաշտում:

Սկզբունքորեն խաղաղադարը չպետք է ավելի երկար տևի քան, երբ այժմ բժշկական անձնակազմը մտնում է խաղաղաշտ վնասվածքը զննելու համար: Տարբերությունն այն է, որ մրցավարը պահանջում էր բժշկական անձնակազմին և խաղացողին թողնել խաղաղաշտը, իսկ այժմ բժշկական անձնակազմը թողնում է խաղաղաշտը, իսկ խաղացողը կարող է մնալ խաղաղաշտում:

Որպեսզի մրցավարները ապահովեն, որ խաղացողը անարդարացիորեն չօգտագործի/չերկարացնի դադարը, մրցավարներին խորհուրդ է տրվում.

- գիտակցել խաղային իրավիճակը և խաղի վերսկսումը ձգձգելու համար ցանկացած հնարավոր տակտիկական պատճառները
- տեղեկացնել վնասվածք ստացած խաղացողին, որ եթե անհրաժեշտ է բուժօգնություն, ապա այն պետք է արագ լինի
- ազդանշան տալ բժշկական անձնակազմին (ոչ պատգարակ կրողներին) և, եթե հնարավոր է հիշեցնել նրանց, որ արագ լինեն

Եթե մրցավարը որոշում է վերսկսել խաղը, ապա.

- բժշկական անձնակազմը թողնում է խաղաղաշտը, իսկ խաղացողը մնում է խաղաղաշտում, կամ
- խաղացողը թողնում է խաղաղաշտը հետագա բուժօգնություն/ բուժզննում ստանալու համար (կարող է անհրաժեշտ լինել ազդանշան պատգարակ կրողներին)

Որպես հիմնական ողեցույց, վերսկսումը չպետք է ուշացվի 20-25 վայրկյանից ավելի, որից հետո բոլորը պետք է պատրաստ լինեն վերսկսելու խաղը:

Մրցավարը պետք է ամբողջովին փոխհատուցի խաղաղադարի համար կորսված ժամանակը:

